

**ԵՐԻՏԹՈՒՐՔ-ՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ
ՕՍՄԱՆԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐՈՒ
ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ**

ԵՂԻԿ ՃԷՐԷՃԵԱՆ
yeghjerj@dm.net.lb

ՄՈՒՏՔ

1880ականներուն, Օսմանեան Կայսրութեան քաղաքական կեանքին մէջ հրապարակ կու գայ սուլթան Ապտիւլ Համիտի (1842-1918) վարչակարգին (1876-1909) ընդդիմադիր շարժում մը, որ ընդհանուր անունով կը կոչուի Երիտասարդ Թուրքերու (երիտթրքական) Շարժում:

Երիտթրքական շարժումը միատարր չ'ըլլար: Ան կ'ունենայ գաղափարական եւ մարտավարական բնոյթի ներքին տարակարծութիւններ, որոնց մէջ նկատառելի դեր կը խաղան նաեւ ղեկավարութեան մէջ յառաջացած անհատական հակակրութիւնները:

Երիտթրքական շարժման ծնունդին ու աշխուժացման տարիներուն գուզընթաց կ'ընթանայ Օսմանեան Կայսրութեան բաղկացուցիչ ազգութիւններուն եւ յատկապէս արեւմտահայութեան ազգային-ազատագրական պայքարի զարթոնքը, նոյնպէս ուղղուած Ապտիւլ Համիտի վարչակարգին դէմ:

Երիտթրքութեան տարբեր թելերուն եւ ազգային-ազատագրական շարժումներուն միջեւ համադրութիւն յառաջացնելու, զանոնք գործունէութեան նուազագոյն ծրագրի մը շուրջ համախմբելով սուլթանին դէմ միասնական ճակատ կազմելու համար, երիտթրքական շարժման ղեկավարները՝ Ահմէտ Ռեզա, Իշխան Սապահէտտին, Թունայլը Հիլմի, Ահմէտ Սիւքութի եւ ուրիշներ, կը նախաձեռնեն երկու խորհրդաժողովներ, որոնք տեղի կ'ունենան Փարիզի մէջ 1902ին եւ 1907ին: Այդ ժողովներուն կը մասնակցին նաեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչները, ինչպէս նաեւ անկուսակցական հայեր:

Հայ նորագոյն պատմութեան համար որոշակի հետաքրքրութիւն կը ներկայացնեն մինչեւ 1908ի սահմանադրական յեղաշրջումը երիտթուրք-հայ յարաբերութիւններն ու այդ ծիրէն ներս օսմանեան ընդդիմադիրներու փարիզեան զոյգ խորհրդաժողովները, հոն քննարկուած նիւթերն ու հայ ներկայացուցիչներուն մասնակցութիւնը անոնց:

Սոյն ուսումնասիրութիւնը կ'ընդգրկէ երիտթուրք-հայ յարաբերութիւնները մինչեւ 1902 եւ հայերու մասնակցութիւնը օսմանեան ընդդիմադիր ուժերու Ա. խորհրդաժողովին:

Հաւանաբար մեր մէկ այլ ուսումնասիրութիւնը ընդգրկէ 1902-1908 ժամանակաշրջանը եւ հայերու մասնակցութիւնը Բ. խորհրդաժողովին:

ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԻՏԹՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԷՁ

1878ին սուլթան Ապտիւլ Համիտ կ'առկախէ սահմանադրութիւնն ու խորհրդարանը եւ կը դառնայ բացարձակ միապետ: Ան բիրտ ուժով կը փորձէ լռեցնել իր իշխանութեան բոլոր ընդդիմադիրները՝ թէ՛ տարբեր ազգութիւններու ազգային-ազատագրութեան ձգտող գործիչներ եւ թէ՛ վարչակարգի բարեկարգման կողմնակիցներ: Ընդդիմադիր գործիչները կ'ապաստանին արտասահմանեան մայրաքաղաքներ՝ Փարիզ, ժընև, Լոնտոն, Պերլին, Գահինէ, Աթէնք, եւն.: Անոնք կը կազմեն փոքր խմբակցութիւններ ու գլխաւորապէս կը զբաղին թերթերու հրատարակումով: 1879էն 1907 արտասահմանի մէջ լոյս կը տեսնեն մօտաւորապէս 120 ընդդիմադիր թերթեր¹, հրատարակ կու գայ օսմանեան քաղաքական վտարանդիութիւնը՝ երիտթրքական շարժումը:

Շարժման յետագայ զարգացման մէջ նշանակալից դեր կը խաղայ Պոլսոյ կայսերական Զինուորաբժշկական Ակադեմիայի ուսանողներուն մէջ ալպանական ծագումով Իպրահիմ Թեմոյի 1889 Յուլիսին հիմնած ընդդիմադիր խմբակցութիւնը՝ Օսմանեան Միութեան Ընկերակցութիւն (Իթթիհատի Օսմանլը Ճեմիյէթի): Խմբակցութիւնը չի սահմանափակուիր ուսանողական շրջանակներու մէջ, այլ կ'ընդգրկէ նաեւ պետական պաշտօնեաներ²:

Փարիզ ապաստանած ընդդիմադիր գործիչ, Իթթիհատի յայտնի եւ երկարամեայ ղեկավարներէն Տոքթ. Նազըմ, հանդիպումներ կ'ունենայ 1889էն Փարիզ գտնուող եւ իր ընդդիմադիր հրատարակագրութեամբ հանրայայտ Ահմէտ Ռըզայի հետ եւ վերջինիս կ'առաջարկէ ստանձնել ընկերակցութեան Եւրոպայի բաժնին ղեկավարութիւնը: Ռըզա կ'ընդառաջէ եւ անոր առաջարկով կազմակերպութիւնը կը կոչուի Օսմանեան Միութիւն Եւ Յառաջդիմութիւն Ընկերակցութիւն (Օսմանլը Իթթիհատ Վէ Թերաքքի Ճեմիյէթի):

1894-95ին Ընկերակցութեան Պոլսոյ կառոյցը Բ. Դուան կողմէ կը բացայայտուի կը ձերբակալուին շարժման ղեկավարներէն շատեր, որոնց շարքին Ապտուլլահ Ճեւտէթ, Էիրիթիլի Ծելքէթ, Շերաֆէտտին Մայմումի եւն.³: Տեղի կ'ունենան բազմաթիւ ձերբակալութիւններ: Շարժման շարք մը ղեկավարներ խոյս կու տան արտասահման: Թեմո կ'ապաստանի Ռումանիա: Ձերբակալութիւնները, հալածանքներն ու երկրէն փախուստը կը տկարացնեն կազմակերպութեան Պոլսոյ մասնաճիւղը եւ հակառակ անոր որ ընկերակցութեան կանոնագրութեամբ

հաստատագրուած էր թէ անոր ղեկավար մարմինը Պոլսոյ վարչութիւնն է, իրողապէս այդ դերը կը ստանձնէ Փարիզի վարչութիւնը: Աւելի ուշ, շարք մը մասնաճիւղերու առաջարկով, այդ հարկադրական իրողութեան կը տրուի նաեւ կանոնադրային հանգամանք: Կազմակերպութեան ղեկավարը կը դառնայ Ռըզա: Անոր խմբագրապետութեամբ 1895 Դեկտեմբեր 1էն Փարիզի մէջ կը սկսի լոյս տեսնել *Մեշերէթ* (խորհուրդ) պաշտօնաթերթը իր Ֆրանսերէն յաւելուածով: Կը սկսի լոյս տեսնել նաեւ երիտթրքական շարժման մէջ իր ազդեցութիւնը ունեցող *Շուրայի Իւմէթ* (ազգային խորհուրդ) թերթը:

Կայսրութեան տարածքին եւ անկէ դուրս կը ծաւալի Իթթիհատի կազմակերպչական ցանցը: Կը վերակազմաւորուի նաեւ Պոլսոյ մասնաճիւղը: Իթթիհատի գորացման զուգահեռ կը յառաջանան նաեւ տարակարծութիւններ: Պրիւքսէլի մասնաճիւղի ղեկավար Խայիլ Զիա կ'առաջադրէ պետական հարուածով իշխանափոխութիւն կատարելու տեսակէտը, զոր կը պաշտպանէ եւրոպական մամուլի էջերէն: Այս տեսակէտը կը պաշտպանէ նաեւ Պոլսոյ ղեկավարութիւնը: Ռըզա կտրականապէս կը մերժէ այս տեսակէտը:

Այդ շրջանին Եւրոպա ապաստանած ընդդիմադիր գործիչներուն մէջ հեղինակութիւն կը դառնայ Մուրատ պէյը: Ըլլալով Ապտիւլ Համիտի գործակիցներէն, Մուրատ պէյ սուլթանին առաջարկած էր վերականգնել սահմանադրութիւնը: Սուլթանէն մերժուելով ան կ'ապաստանի Փարիզ ու կը համալրէ Իթթիհատի շարքերը: Մուրատ պէյ կը պաշտպանէ արտաքին ուժերու միջամտութեամբ Ապտիւլ Համիտի վարչակարգը տապալելու տեսակէտը: Ռըզա վճռականապէս կը հակադրուի նաեւ այս տեսակէտին: Մուրատ պէյ 1895 Դեկտեմբերին կը մեկնի Գահիրէ, կը ստանձնէ տեղւոյն Իթթիհատի ղեկը եւ իր խմբագրապետութեամբ լոյս տեսնող *Միզան* (կշիւք) թերթին մէջ (որ շրջան մը շուքի մէջ կը ձգէ *Մեշերէթ*) կը պաշտպանէ արտաքին միջամտութեան եւ պետական հարուածի զոյգ տեսակէտերը: 1896 Յուլիսին Մուրատ պէյ կը վերադառնայ Փարիզ, ուր կը շարունակէ հրատարակել *Միզան*ը:

Պետական հարուածի եւ օտար միջամտութեան դէմ Ռըզայի անդրդուելի կեցուածքներուն պատճառով, կտրուկ քայլերով իշխանափոխութեան կողմնակիցները կը հակադրուին անոր: Յեղափոխական գործունէութիւն ծաւալելու կողմնակիցներէն խումբ մը, թունայլ Հիւմիի գլխաւորութեամբ կը հիմնէ նոր կազմակերպութիւն մը՝ Օսմանեան Յեղափոխականներու Խմբակցութիւնը (Օսմանյլ Իհթիլալ Ֆըրքասը), որ ժընեւի մէջ կը սկսի հրատարակել *էզան* թերթը: Ռըզա կը հակադրուի նաեւ յեղափոխական գործունէութեան կողմնակիցներուն: Ան, իր կուսակիցներէն կը մեղադրուի անգործնականութեան մէջ: 1896 Նոյեմբերին կայացած արտակարգ ժողովի մը ընթացքին, Իթթիհատի Կեդրոնական Վարչութեան նախագահ կ'ընտրուի Մուրատ պէյ: Ռըզա կը

մնայ Մեշեբրէթի ֆրանսերէն յաւելուածին խմբագրապետը՝ որ կը նկատուի անոր անձնական հրատարակութիւնը: Կուսակցութեան պաշտօնաթերթ կ'ընդունուի Միգանը, որ պէտք է հրատարակուէր հաւաքական խմբագրութեամբ: Յեղափոխական գործունէութեան կողմնակիցները, քանի մը առիթներով կը ծրագրեն Ապտիւլ Համիտի ահաբեկումը, որ չ'իրագործուիր:

1897 Փետրուարին Իթթիհատի ղեկավարութիւնը կը հաստատուի ժընեւ: Մուրատ պէյի առաջարկով Փարիզի մասնաճիւղին ղեկավարութիւնը կը յանձնուի Ռըզային, սակայն երկու հոսանքներուն եւ անոնց ղեկավարներուն միջեւ վէճերը չեն հանդարտիր:

Վէճերը կը սրին մասնաւորապէս Կրետէ կղզիի տագնապի օրերուն, որուն մասին աւելի հանգամանալի պիտի անդրադառնանք աւելի ետք: Մուրատ պէյի մօտ յոյսեր կը ծագին որ Մեծն Բրիտանիան օգտագործելով առիթը միջամտութիւն կը կատարէ եւ միջազգային վեհաժողովի մը ընթացքին ընդհանրապէս կը քննարկուի Օսմանեան Կայսրութեան ճակատագրին հարցը: Ժընեւի եւ Փարիզի մասնաճիւղերուն միջեւ վէճը գագաթնակէտին կը հասնի երբ Մեշեբրէթի ֆրանսերէն յաւելուածին մէջ յոյս տեսած յօդուած մը անընդունելի կը նկատուի ժընեւի կեդրոնին կողմէ, որ կը հրահանգէ նոյն թերթին մէջ տպել գրութիւն մը, ուր ըսուի թէ այդ յօդուածին հրատարակութիւնը արդիւնք էր սխալմունքի մը: Երբ Ռըզա չ'անսար Կեդրոնի հրահանգին, Մուրատ պէյ հարցը կը բարձրացնէ Կեդրոնական Վարչութեան եւ կը պահանջէ Ռըզայի հեռացումը կուսակցութենէն⁴: Կ. Վարչութիւնը դժուարութեամբ կը կայացնէ այդ որոշումը, որ շրջանային վարչութիւններուն կողմէ խանդավառութեամբ չ'ընդունուիր: Բոլորն ալ կը դիտակցէին որ այդ որոշման մէջ դեր խաղցած էր անձնական հակակրօնութիւնը եւ հակառակ Ռըզայի անձնակեդրոն բնաւորութեան, բոլորն ալ անոր մտաւորական արժանիքները բարձր կը գնահատէին:

«ԱՐՇԱԿԱՒԱՆԸ»...

Երիտթրքական շարժման եւ Իթթիհատ վէ թերաքքի կուսակցութեան բնորոշ գիծերէն կ'ըլլայ շարժման տարրեր հանգրուաններուն անոր ղեկավար դէմքերէն շատերուն կաշառուիլը սուլթանէն: Կաշառուողները կը լքեն իրենց ընդդիմադիրի դիրքերը եւ կը վերադառնան երկիր: Նման քայլի կը դիմեն Օսմանեան Բարեկարգչական կուսակցութեան հիմնադիր եւ Հիւրրիյէթ (ազատութիւն) թերթի խմբագիր Հայիմ Պարիսը՝ որ ձգելով Լոնտոնը կը ստանձնէ Պէյրութի ջրամատակարարման մենաշնորհը: Միւս կողմէ, ընդդիմադիր Խալիլ Ղանէմ (1877ի օսմանեան երեսփոխանական ժողովի անդամ), արաբերէն իր հրատարակած ԱլՊաշիր (աւետարներ) թերթը կը ծախէ Փարիզի օսմանեան դեսպա-

նատան: Ասոնց շարքին էին նաև Իպրահիմ Ալ Մաուլային, Վասիֆ պէյը, Նիքոլայտիսը եւն.:

Ժամանակի քաղաքական կեանքի աշխոյժ մասնակիցներէն, ՄԴ Հնչակեան կուսակցութեան ղեկավարներէն Ստեփան Սապահ Գիւլեան դիպուկ ձեւով նկարագրելով երեւոյթը կը գրէ. - «Փարիզը դարձել էր ուխտատեղի, մի տեսակ թուրք արշակաւան. ո՛վ պաշտօն էր ուզում կամ պաշտօնի բարձրացում էւ չէր կարողանում իր առաջադրած նպատակին հասնել, վազում, գալիս էր Փարիզ եւ իրեն 'Երիտասարդ' յայտարարում: Բաւականութիւն ստացողը խղճի ամենայն հանդարտութեամբ վերադառնում էր: 'Երիտասարդ թրքութիւնը' մի տեսակ միջոց էր դարձել սուլթան Համիտի կառավարութիւնից պաշտօններ, դրամներ, առաւելութիւններ կորզելու եւ անձնական վրէժխնդրութիւններ յառաջ մղելու»²:

Մուրատ պէյ եւս գերծ չի մնար այս փորձութենէն: 1897 Յունիսին, Օսմանեան գաղտնի ոստիկանութեան տնօրէն Ահմէտ Ճեյալէտտին փաշա եւ Կայսրութեան Փարիզի դեսպան, նախկին լրտեսապետ Միւնիր պէյ Contrexeville աւանին մէջ կը բանակցին անոր հետ: Գոյացած համաձայնութիւնը կը կոչուի Contrexevilleի Համաձայնութիւն: Այս բանակցութիւններուն ընթացքին, սուլթանին ներկայացուցիչները կը հաւաստիացնեն, թէ սուլթանը որոշած է բարեկարգութիւններ կատարել, ուստի կ'առաջարկէ երիտթուրք ղեկավարներուն, որ վերադառնան երկիր, նիւթական վարձատրութիւն եւ պաշտօններ խոստանալով անոնց: Այս մասին Մուրատ պէյ կը զեկուցէ Կ. Վարչութեան, բայց անոնց հաւաքական որոշումի սպասելու կը յայտնէ թէ որոշած է վերադառնալ հայրենիք:

Կը բացայայտուի որ սուլթանին բանագնացները նման հանդիպումներ ունեցած են նաև Ռեզայի հետ, որ մերժած է համաձայնիլ: Սա կը բարձրացնէ Ռեզայի հեղինակութիւնը եւ անոր կ'ապահովէ «դեկավարը գոր սուլթանը չի կրնար գնել»³ մակդիրը: Անյաջող բանակցութիւններէ յետոյ, օսմ. իշխանութիւնները Փարիզի իրենց դեսպանատան միջոցով դատ կը բանան Ռեզայի դէմ: Դատավարութիւնը կ'ըլլայ ադմկայարոյց. «Բլեմանտյի օրինակէն ոգետրուած շատ մը ֆրանսացի մտադրականներ կը շտապեն պաշտպանել Ահմէտ Ռեզան. այդ պատճառով դատարանը կը վերածուի քաղաքական քննարկումներու հրապարակի մը»⁴: Դատավարութիւնը կ'աւարտի Ռեզայի յաղթանակով: Մեշէրէթ կ'ենթարկուի 16 ֆրանքի շնչին տուգանքի մը: Ռեզա կը դառնայ երիտթուրքական շարժման կեդրոնական դէմքը: 1897 Սեպտեմբերէն Ռեզա կը սկսի վերահրատարակել Մեշէրէթի ընթացիկ թիւերը՝ որպէս իթթիհատի պաշտօնաթերթ: Մուրատ պէյի հեռանալէն ետք ժընեւի թուլցած Կ. Վարչութիւնը այս կապակցութեամբ դժգոհութիւն կ'արտայայտէ եւ կ'առաջադրէ կուսակցութենէն հեռացուած ըլ-

լալու պարագան, սակայն կատարուած իրողութեան դիմաց անգոր կ'ըլլայ գործնական քայլեր առնելու: Միւս կողմէ, Մեշլերէթի վերահրատարակութիւնը սուլթանը կը նկատէ Contrexevilleի Համաձայնութեան խախտում: Իր կարգին ժընեւի Կ. Վարչութիւնը սուլթանը կը մեղադրէ խոստացուած բարեկարգութիւնները չգործադրելու եւ նոր ձերբակալութիւններ կատարելու մէջ: կը ձեւաւորուի նոր Կ. Վարչութիւն, որուն վերահսկողութեան տակ կը սկսի լոյս տեսնել Օսմանլի թերթը իր անգլերէն եւ ֆրանսերէն յաւելուածներով: Նոր Կ. Վարչութիւնը կ'առաջարկէ Ռեզային շնորհել այն կարգավիճակը որ ան ունէր նախքան կուսակցութենէն հեռացումը: Ռեզա կ'ընդունի առաջարկը, կը դադրեցնէ Մեշլերէթի ընթացիկ թիւերուն լոյս ընծայումը եւ փոխադարձաբար կ'առաջարկէ «միացնել Փարիզի եւ ժընեւի ճիզերը ընդհանուր ոչ-յեղափոխական, կրատրական ծրագրի մը շուրջ»: այս առաջարկը Կ. Վարչութեան կողմէ կը մերժուի⁹: Փարիզի եւ ժընեւի յարբերութիւնները կը մնան պրկուած:

1898 Ապրիլ-նոյեմբեր ամիսներուն, սուլթանի գործակալներուն եւ ժընեւի կեդրոնին միջեւ տեղի կ'ունենան նոր բանակցութիւններ: Իթթիհատի ղեկավարները այդ բանակցութիւնները կը պատճառաբանեն իրբեւ իրենց բանտարկուած ընկերները ծանր դրութենէն դուրս բերելու ստիպողութեան տակ կատարուած քայլեր՝ վերջիններու ցանկութեամբ: Սակայն, իրականութեան մէջ, անոնց փնտռածը նիւթական աղբիւրներ էին¹⁰: Իթթիհատ կը գտնուէր տնտեսական տազնապալի վիճակի մէջ ու ինչպէս անոր ղեկավարներէն Խալիլ Մուաֆֆաք իր կուսակիցին՝ Իսհաք Միւքուլթիին յղած նամակին մէջ կը գրէ, ստեղծուած էր այնպիսի անհեթեթ կացութիւն մը երբ Ապտիւլ Համիտի դէմ անհնար էր «ընդդիմադիր գործունէութիւն ծաւալել՝ առանց Ապտիւլ Համիտէն ֆինանսատրուելու»¹¹: Ի. Թեմօ եւս իր կուսակիցներուն կ'առաջարկէ ընդառաջել սուլթանի առաջարկներուն, մէկ տարուան համար պաշտօններ զբաղեցնել պետական վարչամեքենային մէջ եւ գանձուած աշխատավարձերը տրամադրել կուսակցութեան: Ռեզա կտրականապէս դէմ կ'արտայայտուի որեւէ ձեւի համաձայնութեան: Լարուած եւ ձգձգուած բանակցութիւններէ յետոյ Իթթիհատի պարագլուխներէն Միւքուլթի, Ապտիւլլահ Ճեւտէթ եւ Թունալը Հիլմի երկրորդ կարգի դիւանագիտական պաշտօններ կը ստանձնեն համապատասխանաբար Հոռմի, Վիեննայի եւ Մատրիտի դեսպանատուներուն մէջ: (Իթթիհատի պարագլուխները իրենց խոստումները չեն յարգեր ու կը շարունակեն անստորագիր յօդուածներով աշխատակցիլ Օսմանլիին եւ զբաղիլ Իթթիհատի կազմակերպչական հարցերով):

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՓԱՓԱՔՆԵՐ

Երբ տակաւին Իթթիհատի ղեկավարներուն եւ սուլթանի գործակալներուն միջեւ բանակցութիւնները կը շարունակուէին, 1899 Օգոստոսին, Իթթիհատը ներքին ճգնաժամէն դուրս բերելու եւ երիտթրքական շարժման տարրեր թեւերուն միջեւ համադրութիւն ստեղծելու նպատակով Հիլմի կ'առաջադրէ ընդդիմադիր բոլոր ուժերով խորհրդաժողով գումարելու գաղափարը, եւ այս ուղղութեամբ կը նախաձեռնէ որոշ աշխատանքներ: Սուլթան Ապտիւլ Համիտ, դիւանագիտական միջոցներով, եւրոպական շարք մը պետութիւններ կը համոզէ նման խորհրդաժողովի մը կայացումը շարունակել: Խորհրդաժողովը կը ձախողի. սակայն այդ գաղափարը կը մնայ կենդանի:

1899 Դեկտեմբերին, մինչ Իթթիհատ կը գտնուէր ներքին պառակտումներու եւ ճգնաժամի մէջ, Եւրոպա կ'ապաստանի երիտթրքական շարժման երրորդ մեծ դէմքը՝ Տամատ Մահմուտ փաշան իր երկու որդիներով՝ իշխան Սապահէտտին եւ Լուիթֆուլլահ պէյ: Սուլթան Ապտիւլ Համիտի քեռայր եւ Արդարադատութեան նախարարի պաշտօն վարած Տամատ Մահմուտ ծանօթ էր իր ազատախոհութեամբ եւ անգլխամէտ հակումներով: Սուլթանը լաւ գիտէր անոր կարողութիւնները, ուստի կը փորձէ կաշառել զայն: Տ. Մահմուտ կը մնայ անդրդուելի եւ գործակցութեան առաջարկ կը ներկայացնէ Ռըզային: Գործակցութիւնը չ'իրականանար՝ արտաքին միջամտութեան հարցով Ռըզայի անգիջող կեցուածքին պատճառով: 1900 Մարտին, Տ. Մահմուտ կը մեկնի Ժընև, կը հանդիպի Կ. Վարչութեան հետ ու կը սկսի աշխատակցիլ Օսմանյիին: Իր ղեկավարութեամբ կը կազմէ նոր վարչութիւն մը, որուն կու տայ Օսմանեան Ազատականներ անունը: Միւս կողմէ, Իթթիհատի գործող վարչութեան մէջ կը կատարուին փոփոխութիւններ: Երկու վարչութիւնները իրենց գործունէութիւնը կը շարունակեն համակեցութեամբ տնտեսական առաւելութիւնը ըլլալով Տամատ Մահմուտ փաշայի կողմը, վերջինս կ'ունենայ գերիշխող դիրք: Զոյգ վարչութիւնները եւ Օսմանյի կը տեղափոխուին Լոնտոն: Տ. Մահմուտ կը յաջողի գործակցութեան լուրջ կապեր ստեղծել ալպան յեղափոխականներուն հետ: Անոր կը միանան յոյն յեղափոխականները:

Այս բոլորը սակայն Իթթիհատը եւ ընդհանրապէս երիտթրքական շարժումը դուրս չեն բերեր ներքին տարակարծութիւններէն: Ռըզայի եւ Տ. Մահմուտի անջատ գործունէութիւններուն զուգահեռ կը պառակտուի նաեւ Եգիպտոսի մասնաճիւղը. Գահիրէի մէջ Պահրիյէյի Ռիզա կը հիմնէ նոր կազմակերպութիւն մը՝ Օսմանեան Միութեան Արշալոյս Ընկերակցութիւնը (Օսմանյր Շաֆաք Իթթիհատ Ճեմիյէթի), որ կը դաշնակցի Ռըզայի: Կը պառակտուի նաեւ Իթթիհատի Կ. Վարչութիւնը³²: Անկէ դուրս կու գան «գործունեաները» եւ կը հիմնեն իրարմէ անջատ գործող շարք մը խմբակցութիւններ, ինչպէս՝ Հայրենիքի եւ Ազգի

Ազգային Համար Օսմանեան Ընկերակցութիւն (Վաթան Վէ Միլլէթ Իսթիքայալ Ճեմիյէթի Օսմանիյէսի), Վրէժխնդիր Երիտասարդ Օսմաններու Ընկերակցութիւն (Ինթիքամըր Ենի Օսմանլըյար Ճեմիյէթի), Հատուցման Ընկերակցութիւն (Իսթիրտատ Ճեմիյէթի), եւն.:

Տարակարծութիւններն ու ներքին պառակտումները աւելի կը շեշտեն տարբեր խմբաւորումներու միջեւ գործակցութիւն ստեղծելու համար խորհրդածողովի մը անհրաժեշտութիւնը:

ԵՐԻՏԹՈՒՐՔ-ՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ 1902Ի ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Երիտթուրքերը ընդհանուր առմամբ, Օսմանեան Կայսրութեան մէջ ծաւալ ստացող ազգային-ազատագրական շարժումներուն կը վերաբերէին հակակրանքով, զանոնք նկատելով Կայսրութեան ամբողջականութեան դէմ ուղղուած արտաքին ուժերու սաղրանքը: Անոնք կը փորձէին համոզել ազգային-ազատագրական շարժումներու ներկայացուցիչները՝ հրաժարիլ անջատողական ձգտումներէն եւ մասնակի բարեկարգումներու պահանջներէն, միացնել ճիգերը, տապալել համիտեան վարչակարգը, հաստատել սահմանադրութիւն, նախաձեռնել ընդհանուր բարեկարգութիւններու՝ որուն ծիրին մէջ ինքնաբերաբար կը բաւարարուին նաեւ ազգային փոքրամասնութիւններուն պահանջները: Ընդհանրապէս երիտթուրքերը եւ ի մասնաւորի Իթթիհատի մէջ Ռըզայի գլխաւորած թեւը օսմանականներ էին: Անոնց հիմնական նպատակն էր պահպանել Օսմանեան Կայսրութեան ամբողջականութիւնը եւ կատարել վարչական բարեկարգումներ: Երիտթուրքերը «շատ քիչ հետաքրքրուած էին գաղափարախօսական եւ ընկերային հարցերով: Անոնց հիմնական մտահոգութիւնը գոյատեւման հարցն էր՝ օսմանեան պետութեան գոյատեւման հարցը, որ իրենց հայրերը սերունդներ ամբողջ կրցան պահպանել: Իրենց ամբողջ գործունեութիւնն ու քննարկումները կը դառնային մէկ հարցի շուրջ- Bu devlet nasil kurtarilabilir? այս պետութիւնը ինչպէ՞ս կարելի է փրկել»¹³:

Հակառակ ազգային-ազատագրական շարժումներուն հանդէպ Իրենց ժխտական դիրքորոշման, երիտթուրքերը մարտավարական ընդհանրական շահեր հետապնդելով, կը փորձեն կապեր մշակել ոչ-թուրք խմբաւորումներու հետ: Այս ծիրէն ներս, անոնք յարաբերութեան մէջ կը մտնեն նաեւ հայկական կուսակցութիւններուն հետ:

Անդրադառնալով նոր սկիզբ առնող Հնչակեան-Իթթիհատ յարաբերութիւններուն, Սապահ Գիւլեան կը գրէ. «Մեր անհատական կուսակցական յարաբերութիւնը սկսած է 'միութեան եւ յառաջդիմութեան' հիմնադիր՝ Ահմէտ Ռիզայի հետ, դեռ 1891-92ին»¹⁴: Մինչեւ 1895 այդ «յարաբերութիւնները, առանց ընդհարումների, շարունակուում էին բարի դրացնութեան, լայնախոհ հակառակորդութեան հողի վրայ՝ գէթ մեր

կողմից, երբ առաջին պատեհ ատթիւ կրքերը բորբոքեցան եւ 'թշնամական' յարաբերութիւնները սկիզբ առան»¹⁵:

*Երիտթուրք-Դաշնակցութիւն յարաբերութիւնները եւս կը սկսին մօտաւորապէս նոյն շրջանին: Ատենի ՀՅԴ-ի ղեկավարներէն Միքայէլ Վարանդեան, 1910ին հրատարակած Վերածնող Հայրենիքը եւ Մեր Դե-
րը գիրքին մէջ կը գրէ. «ոչ այդ աստիճան, ի հարկէ, բայց դարձեալ մտերմական էին մեր յարաբերութիւնները վերջին 15 տարուայ ըն-
թացքում՝ թուրք ու քիւրտ դիմադրական տարրերի հետ: Ժընելը դարձ-
եալ ժամադրաւայր էր, ուսկից անցնում էին Միւրութիւնները, Թունալը-
ները, Ապտիլուահմանները եւ անվերջ բանակցում ու յօրինում գոր-
ծունէութեան ծրագրեր: Վարանումի շրջան էր նրանց համար, ծոյլ ու անգոյն ֆրագամոլութեան, 'թղթային յեղափոխութեան' շրջանը: Շատ ջանացիւք բերելու նրանց մեր հաւատքին-ապարդիւն: 'Մեշերէթեան' խաղաղ, անարիւն յեղափոխութեան դաւանանքը մտել էր բոլորի ուղի ու ծուծը, թունաւորել, մեղկացրել»¹⁶:*

*Երբ Փարիզի մէջ յարաբերութիւնները այս կարգի էին, 1893ին Պոլսոյ մէջ կը տարածուի «Հայերը եւ Թուրքերը Սուլթան Համիտի Տակ» վերնագրով թռուցիկը, որ կը ծանուցէ թէ լոյս տեսած է Պոլսոյ Երիտա-
սարդ Թուրքերու Կոմիտէի տպարանէն: Օսմանեան Արտաքին Գործոց Նախարարութիւնը ղեսպանատուններուն ցուցմունք կու տայ բացայայ-
տել թռուցիկին հեղինակը, «որովհետեւ գրեթէ անհնար է որ այդ տպա-
գրուած ըլլայ Կ. Պոլսոյ մէջ»¹⁷: Կարճ ժամանակ անց կը տարածուի նաեւ նոյն թռուցիկին ֆրանսերէն թարգմանութիւնը: Թռուցիկները կ'արժանանան եւրոպական մամուլին ուշադրութեան:*

*Երիտթուրքերու կողմէ Պոլսոյ մէջ հակասուլթանական թռուցիկ-
ներու ցրուումը մերթընդմերթ կը կրկնուի: Թռուցիկներուն մէջ նաեւ սուլթանին դէմ միասնական պայքարի կոչեր կ'ըլլան: Անդրազառնա-
լով նման կոչի մը Դրօշակ կը գրէ. «յայտարարութեան մէջ կարճ եւ ազդու կերպով ցոյց է տրուած Թուրքիոյ հոգեվարք դրութիւնը, անոր մօտալուտ մահը, եթէ վերջնական դարման ձեռք չառնուի անոր փրկութեան համար: Յայտարարութիւնը կը վերջանայ ազդու հրատե-
րով մը, որով թուրք յեղափոխականները կը հրաւիրուին միանալ եւ տապալել գազան սուլթան Համիտը, որու թագաւորութիւնը Թուրքիոյ լայնածաւալ կայսրութեան համար աղետներու, արհաւիրքներու, կե-
ղեքումներու եւ թշուառութիւններու երկար շարք մըն է եղեր...»¹⁸:*

*
* *

*Հայ ազգային-ազատագրական պայքարի զարթօնքին սուլթան Հա-
միտ կը պատասխանէ համատարած ջարդերով: 1894-96ին Արեւմտահա-
յաստանի եւ Պոլսոյ մէջ կը ջարդուին հարիւր հազարաւոր հայեր: Անդ-
լիա, Ֆրանսա եւ Ռուսիա կը միջամտեն եւ սուլթանը 1895 Մայիս 11ին կը*

ստորագրէ մայիսեան բարեկարգումներու ծրագիրը: Ահազանգի կը մատնուին իթթիհատականները: Մեշեքէթ կը գրէ. «Մայիս 11ի ծրագիրը մասնակի բարեկարգութիւններ աչքի առաջ ունէր, օսմանեան երկրի միայն մի մասի համար. մինչդեռ պէտք է ներմուծել ընդհանուր, լայն շափերով բարեկարգութիւններ, որպէսզի ամբողջ օսմանեան պետութեան բոլոր ժողովուրդի վրայ տարածուէր անխտիր»¹⁹: Հայկական նահանգներուն խոստացուած բարեկարգութիւնները ամբողջ կայսրութեան վրայ տարածելով, ընդհանրապէս բարեկարգ եւ արդիական պետութիւն մը ստեղծելու վերափոխիչ եւ յառաջդիմական նպատակը չէր միայն երիտթուրքերուն հետապնդածը: Անոնք չէին ընդուներ որ հայերը իրենց տառապանքներով, կարիքը ունին շուտափոյթ եւ մասնայատուկ բարեկարգումներու: Երիտթուրքերը կը հաւաստէին թէ թուրքն ու քիւրան ալ հայերուն չափ կը տառապին համիտեան վարչակարգէն: Հայերուն մասնայատուկ իրավիճակին մերժումը, խորքին մէջ ժխտումն էր անոր ազատական ձգտումներու արդարացիութեան, որ կրնար տանիլ մինչեւ ինքնավարութեան պահանջը, նոյնիսկ՝ անջատում կայսրութենէն: «Երիտասարդ թուրքերը եւ յատկապէս Ռեզան չէին ցանկար ընդունիլ որ հայ ժողովուրդին մասնայատուկ կացութիւնը կրնար պահանջել յատուկ ծրագիր մը եւ փոխարէնը կը ջատագովէին ընդհանուր բարեկարգութիւններ ամբողջ կայսրութեան համար: Այս շրջագիծէն ներս, 'բարեկարգումներ բոլորին համար' լոզունգը, որ երիտթուրքերուն կողմէ հետետողականօրէն յառաջ կը քաշուէր, հեռու էր չէզոք լոզունգ մը ըլլալէ»²⁰:

Այս տեսակէտը միայն Մեշեքէթինը չէր, այլ ըստ էութեան երիտթուրքական շարժման գաղափարախօսութեան կարեւոր բաղադրիչներէն էր: Մուրատ պէյ, 1897 Յունիսին ժընեւի մէջ հրատարակած *La Force et la Faiblesse de la Turquie les Coupables et les Innocents* (Թուրքիոյ գօրութիւնը եւ տկարութիւնը յանցաւորները եւ անմեղները) գիրքին մէջ, ուր շարադրուած են իր քաղաքական հայեացքները, քրիստոնեայ ժողովուրդներու պահանջներուն մասին կը գրէ. «Թուրքիոյ մէջ քրիստոնեաներու հարցը Օսմանեան կայսրութեան հողին վրայ հասունցած պտուղ մը չէ: Այս հարցը իր ծնունդը առած է դիւանագիտական գրասենեակներու մէջ»²¹: Իսկ հայերուն առնչութեամբ, ան կ'աւելցնէ. «Կատահար, Թուրքիոյ մէջ յատուկ հայկական հարց մը, ընդհանուր բարեկարգումներու ծիրէն դուրս, պէտք չէ եւ կարելի չէ որ բարձրացուի, այն պարզ պատճառով, որ ոչ մէկ հիմք կայ, նոյնիսկ արիեստական, Հայաստան մը կառուցելու համար»: Յիշեալ գիրքին մէջ Մուրատ պէյ «ներկայացնում էր հայ յեղափոխականներին յաչս Երոսպայի, իբրեւ մահմետական ժողովրդների երդուեալ ոսոխներ, նրանց դահիճներ ու կոտորողներ»²²:

Մայիսեան բարեկարգումներու ծրագիրէն անմիջապէս ետք Ռըզա եւ Տոքթ. Նազրմ Փարիզի մէջ հանդիպում կ'ունենան Հնչակեան Կուսակցութեան ղեկավարներուն հետ: Տքթ. Նազրմ նոր եկած էր Պոլիսէն: Ան երկարօրէն կը պատմէ թէ ինչպէս Կայսրութեան բոլոր կողմերը իսլամ ընդդիմադիրներ կան որոնք կազմ ու պատրաստ կը սպասեն հրահանգի՝ որպէսզի տապալեն սուլթանը: Ուստի ան միասնական պայքարը անհրաժեշտութիւն կը նկատէ եւ կ'առաջարկէ այս բովանդակութեամբ համատեղ յայտարարութիւն մը հրապարակել: «Նենգամտութիւնը որոշ էր: Մեր կողմից կատարեալ մերժում»²³ կ'եզրակացնէ Սապահ Գիւլեան: Իթթիհատի փափաքով տեղի կ'ունենայ երկրորդ հանդիպում մը, որուն մասին Գիւլեան կը գրէ. «մեր վերջնական եւ կտրուկ պատասխանն եղաւ, որ սկզբունքով հակառակ չենք ամբողջ Թուրքիայի բարեկարգութեան, ընդհակառակը՝ ցանկացողն ենք, եւ Մայիս 11ի ծրագիրը արդէն այդ ընդհանուր բարեկարգութեան մի մասն էր, յարմարեցումս՝ աւելի ու պակաս, հայ ժողովուրդի պահանջներին: Ուստի, եթէ անկեղծ էին, ոչ միայն չպիտի հակառակէին, այլ իրենք էլ պիտի աշխատէին, որ այդ ծրագիրը օր առաջ իրականութիւն ստանար: -Համաձայնութիւնը չեկաւ»²⁴:

Սուլթան Ապտիւլ Համիտ, ստորագրուած ծրագրի գործադրութեան հանդէպ կը մնայ ամբողջապէս անտարբեր, որուն պատճառով Հնչակեան Կուսակցութիւնը Սեպտեմբեր 30ին Պոլսոյ մէջ կը կազմակերպէ Պապը Ալիի ժողովրդային ծանօթ ցոյցը (սուլթանը այդ ծրագիրը կը վաւերացնէ Հոկտեմբեր 12ին): Իթթիհատականները շատ գոհ չեն մնար ցոյցէն ու այս առիթով Պոլսոյ մէջ կը հրապարակեն թռուցիկ մը ուր կ'ըսուի.-

Մուսլիմաններ եւ սիրելի հայրենակից թուրքեր,

Հայերը մեր երկրին բարձր իշխանութեան՝ Պապ Ալիի վրայ, որ յարգանք կը վայելէ բոլոր եւրոպացիներէն, յարձակում գործել համարձակած են: Մեր մայրաքաղաքը ցնցեցին: Կը ցաւինք հայ հայրենակիցներու այս լիրք շարժման համար: Բայց, ճշմարտութիւնը այն է, որ հալածանք, «զուլում», բռնութիւն եւ յոռի վարչութիւն պատճառ եղան որ այս ցաւալի դէպքերը պատահին:

Մենք՝ թուրքերս ալ, միւս բոլոր օսմանցիներուն հետ, բարենորոգում եւ ազատութիւն կ'ուզենք այս բռնակալ կառավարութենէն: Մեր ընկերակցութիւնը կ'աշխատի այդ նպատակին համար: Մենք, այսօր, փոխանակ հայերը պատժելու մասին խորհելու, յոռի վարչութեան, զուլումի եւ բռնապետութեան կեդրոն Պապը Ալին, շէյխ ուլ իսլամի պաշտօնատունը եւ Երլտըզը կոխելով այդ պաշտօնատուները բռնապետներուն զլխուն փլցնենք: Չեոք ձեռքի տանք, հաւաքուինք, շատնանք եւ ցոյց տանք քաղաքակիրթ աշխարհին, թէ ալ ազատութեան սիրահար եւ անոր արժանի ենք:

Սա, առաջին թուուցիկն էր որ Իթթիհատ Պոլսոյ մէջ կը հրապարակէր իր պաշտօնական անունով:

Պապը Ալիի ցոյցին հանդէպ եւրոպական մամուլին եւ քաղաքական շրջանակներուն հանդէս բերած հետաքրքրութեան մթնոլորտին մէջ, երիտթրքական շարժման մաս կազմող Թուրք-Սուրիական Կոմիտէի նախագահ էմիր Արսլան, 1895 Նոյեմբեր 29ին *L'Intransigent* թերթին տուած հարցազրոյցին մէջ կ'ըսէ. «Մեր կուսակցութիւնը միջնորդի դեր կը կատարէ իրենց ինքնավարութիւնը պահանջող քրիստոնէայ հայերուն եւ երիտթուրքերուն միջեւ, որոնք մեզի նման իսլամ են եւ կը ցանկան պահպանել կայսրութեան ամբողջականութիւնը, միաժամանակ ձեռք ձգելով գործնական բարեկարգումներ անոր բոլոր հպատակներուն համար»²⁶:

Մէկ այլ երիտթուրք գործիչ՝ Իզզէթ պէյ եւս հայ-թուրք համագործակցութեան կոչ կ'ընէ, որուն պատճառով կը ձերբակալուի համիտեան իշխանութիւններուն կողմէ²⁷:

1895 Դեկտեմբերին, Մուրատ պէյ եւս հանդիպումներ կ'ունենայ հայ կուսակցութիւններուն հետ: Այդ հանդիպումները սակայն գործակցութեան շուրջ արդիւնք մը չեն տար²⁸:

Ռըզա Փարիզի մէջ հանդիպում կ'ունենայ Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ ղեկավարներէն Արփիար Արփիարեանի հետ, որ Պապը Ալիի ցոյցէն ետք անցած էր արտասահման: Շուրջ երկու ժամ տեւած խօսակցութենէն յետոյ Արփիարեան կ'եզրակացնէ թէ «ծրագրի մը վրայ համաձայնութիւնը դժուարին կ'երեւար», բայց կը խոստանայ Լոնտոն երթալէն ետք - ուր կը գտնուէր Հնչակեան Կուսակցութեան կեդրոնատեղին - հարցը համաձայնեցնել իր կուսակիցներուն հետ, «աւելի հիմնաւոր բանակցութեանց սկզբնատրման»²⁹ համար: Արփիարեան իր հետ Լոնտոն կը տանի Ռըզայի գրաւոր առաջարկները որոնք 1896 Ապրիլին կը քննարկուին Կուսակցութեան ղեկավարութեան ընդլայնուած նիստի մը ընթացքին: Ռըզա կ'առաջարկէր գործակցութեան համար հիմք ընդունիլ Միտհատեան Սահմանադրութիւնը, որմէ յետոյ ինք պատրաստ էր գալ Լոնտոն եւ քննարկել հարցի մանրամասնութիւնները: Ժողովը կ'որոշէ պաշտօնապէս չպատասխանել Ռըզային եւ անոր հետ բանակցութիւնները շարունակելու համար Սուրէն Սուրէնեանը (Ղազարոս Կտլոզեան) լիազօրել որ մեկնի Փարիզ: Սուրէնեանի վերադարձը Փարիզէն կը համընկնի Հնչակեան Կուսակցութեան մէջ ներքին տարակարծութիւններու յառաջացման. «նոյն օրերը ներքին խնդիրներ ծագելով, այլեւս մոռցուեցաւ երիտասարդ թուրքերուն հետ յարաբերութեան գործը»³⁰ կը գրէ Արփիարեան:

Ռրգա սակայն չի յուսահատիր: Ան կը մեկնի Լոնտոն եւ հանդիպում կ'ունենայ Հնչակեան Կուսակցութեան ղեկավար Աւետիս Նազարբէկեանի հետ: «Ընկ. Նազարբէկն էլ նոյն պատասխանն էր տուել: Այստեղից էլ ձեռնունայն վերադարձաւ»³¹ կը գրէ Սապահ Գիւլեան:

1896 Օգոստոսին, Փարիզի մէջ տեղի կ'ունենայ հանդիպում մը մէկ կողմէ տակաւին իր սաղմնաւորման մէջ գտնուող Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ Արշակ Զօպանեանի, Արփիարեանի, Անտոն Ռշտունիի եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ուղղակի չպատկանող երկու այլ անձերու եւ միւս կողմէ Մուրատ պէյի, Ռրգայի եւ երեք այլ երիտթուրք ներկայացուցիչներու միջեւ: Շուտով կը պարզուի որ «համաձայնութիւն մը անկարելի պիտի ըլլար», որովհետեւ երիտթուրքերը «կը փափաքէին որ միաբանինք եւ միֆիատեան սահմանադրութեան գործադրութիւնը պահանջենք, միանգամայն յայտարարելով որ հայ ազգը ինքնավար Հայաստանի մը պահանջումէն կը հրաժարի: Մեր պատասխանը եղաւ «Հայաստանի ինքնավարութեան դատը ամբողջ հայ ազգին սեփականութիւնն է: Ո՛չ պատրիարքը, ո՛չ ազգային ժողովը, ո՛չ որեւէ կուսակցութիւն իրատունք ունի, առանց ամբողջ ազգէն արտօնուելու, յանուն ազգին այդ դատին հակառակող որեւէ յանձնառութեան ներքեւ մտնել: Մենք կուսակցութիւն մըն ենք, եւ մեր իրաւասութեան շրջանակին մէջ կրնանք խօսիլ միայն»³²:

Անկախ այն բանէն որ երիտթուրքական շարժման տարրեր թեւերուն եւ հայ կուսակցութիւններուն միջեւ առկայ էին լուրջ տարակարծութիւններ՝ յատկապէս ազատագրական շարժման գնահատանքին, օտար միջամտութեան, սահմանադրութեան բովանդակութեան, հայկական նահանգներու մէջ մասնակի բարեկարգութիւններուն շուրջ, երիտթուրքերը նաեւ անկեղծ չէին հայերու հետ իրենց յարաբերութեան մէջ: Մեշեքեթը, «հայկական անխիղճ խողխողումներու ատեն, սուլթանի հասցէին ակամայ երկու խօսք կը գրէր, երբ հայերը փոխվրժ լուծել փորձէին քիթը բերանը կը ճմռթէր: Ռիզայի ոգին, թէի քառսային, սա էր- հայերը ո՞վ են որ ալ օսման կառավարութեան ձեռք կը վերցնեն»³³: Իսկ Մուրատ պէյ Միզանի էջերուն մէջ կը պաշտպանէր Ապտիւլ Համիտի կազմակերպած արիւնահեղութիւնը³⁴:

Երիտթուրքերու քծնանքն ու երկերեսանիութիւնը ցայտուն դարձնելու համար, Սապահ Գիւլեան կը բերէ Տոքթ. Նազըմի օրինակը: Վերջինս, Զէյթունի ապստամբութեան հայոց յաղթանակին թարմ տպաւորութեան տակ «զլուխը կախ, ընկճուած» տրամադրութեամբ, տողերը գրողին կ'ըսէ. «Վերջապէս առաք, բարի՛ վայելում, դարձեալ՝ որպէս եղբայրներ՝ միասին պիտի լինենք: Դուք պետութեան արեւելեան թումրը պիտի կազմէր եւ մեր ընդհանուր վերածնունդի օրինակը, պատճառը դառնար...էլ մոռնանք մեր կոխները...»³⁵: Մինչ, քանի մը ա-

միս անց, Պանք Օթոմանի գրաւման դէպքէն (1896 Օգոստոս 14) անմիջապէս ետք, երբ Տքթ. Նազըմ եւ Ռըզա կը ճեմէին Փարիզի փողոցներուն մէջ, պատահականօրէն կը հանդիպին Սապահ Գիւլեանին. Ռըզա ժպտով կ'ըսէ. «Պ. Սապահ Գիւլեան, այս անգամ 10 հազարներով եմ կոտորում ... ուր մնաց հայկական դատը, Մայիս 11ի ծրագիրը, եւրոպական միջամտութիւնը», մինչ Տքթ. Նազըմ, «ժողովան ցնծութեամբ» կ'աւելցնէ. «այս մի քանի օրուայ կոտորածների թիւր 100 հազարից անցել է. երեւի, էլ հայ չալիտի թողնեն»³⁶:

Հակառակ որ երիտթուրքերը հայկական հարցը կը նկատէին արհեստական եւ իրենց կեցուածքը հայ ազգային-ազատագրական շարժման հանդէպ ժխտական էր, անոնք կը շարունակէին հայկական կուսակցութիւններուն հետ գործակցութեան կոչեր հրապարակել: Առաջադրուած գործակցութեան միջոցով, երիտթուրքերը կը ջանային հայ կուսակցութիւնները հեռացնել իրենց ազգային առաջադրանքներէն եւ անոնց ներուժը օգտագործել իրենց հետապնդած համապետական խնդիրներու լուծման:

1896 Նոյեմբերին Փարիզի մէջ տեղի կ'ունենայ Իթթիհատի խորհրդաժողովը: Դրօշակ կը քննադատէ գալն, գտնելով որ «կուսակցութիւնը մնացել է նոյն անորոշութեան մէջ, դնելով նպատակ 'կառավարութեան ու խալիֆայութեան փրկութիւնը' եւ զբաղուել է գլխատրապէս վարչական փոփոխութիւններով: Պաշտօնաթերթը կ'աւելցնէ սակայն որ, - միակ մխիթարականն այն է, որ այսօր, 'երիտասարդ թուրքիան' անուրանալի է համարում հայ յեղափոխականներիս արժանատրութիւնները եւ ներում մեր սխալները: Յոյս տաժենք, որ այս խոստովանութիւնից յետոյ իրենք տաճիկներն էլ կ'աճապարեն ձեռք բերել նոյն արժանատրութիւնները»³⁷:

1896 Դեկտեմբերին, Միզանի մէջ Մուրատ պէյ, որ վերջին խորհրդաժողովին ընտրուած էր Իթթիհատի նախագահ, իր «Հայ Հայրենակիցներուն Հրաւէր Մը» վերնագրեալ յօդուածին մէջ կը գրէ. «Ո՛վ մեր հայրենակիցներ, ո՛վ հայրենիքի մէջ եւ անորմէ դուրս գտնուող կուսակցութիւններ, մենք այս հրաւերը կ'ուղղենք ձեզի Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան անունով: Եկէք մոռնանք անցեալը եւ մեր ճիգերը նուիրենք ապագային: Եկէք միանանք որպէսզի փրկենք հայրենիքը այն աղետէն որուն մէջ կը գտնուի ան»³⁸:

Նոյն օրերուն, ՀՅԴԻ մէջ աւելի յստակ կը դառնան երիտթրքական շարժման հետ համագործակցելու միտումները: 1896 Դեկտեմբերին, ՀՅԴ Վասպուրականի կեդրոնական կոմիտէն, կուսակցութեան Բ. Ընդհանուր ժողովին յղած իր տեսակէտերուն շարքին կ'առաջարկէ. «Երիտասարդ թուրքիային ամեն կերպով մօտիկնալ նպաստատր կը լինի մեր կարծիքով. բաւական է որ միութիւն անկեղծ լինի եւ ոչ օգ-

տուելու համար սուկ»³⁰։ ՀՅԴ կովկասեան մարմիններու 1897-98 տարե-
չրջանի Ռայոնական Ժողովը իր հերթին, քննարկելէ ետք «Բարեկամու-
թիւն երկրում ապրող միւս ցեղերի հետ եւ յարաբերութիւն թուրքա-
հայատակ ուրիշ ազգերի յեղափոխական կազմակերպութիւնների հետ»
օրակարգը, միաձայնութեամբ կ'որոշէ. «յարաբերութիւններ սկսել
թուրքահայատակ միւս ազգութիւնների յեղափոխական կազմակեր-
պութիւնների հետ համերաշխ գործակցելու համար»³⁰։

ՀՅԴի մէջ հասունցող այս տրամադրութիւնները կ'արտացոլան նա-
եւ Կուսակցութեան պաշտօնաթերթին մէջ։ Դրօշակ իր Ա. էջին վրայ
ամբողջապէս կը թարգմանէ երիտթրքական շարժման բաղկացուցիչ
թեւերէն նկատուող Թ. Հիւմիի հիմնած Օսմանեան Յեղափոխական
Կուսակցութեան Ա. շրջաբերականը ու ապա, «Վերջապէս» խորագրին
տակ վերլուծելով զայն, դրական կը գտնէ «կատղած շունը սպաննե-
լու» (խօսքը սուլթան Համիտի մասին է - Ե-Ծ.) կոչը։ Դրօշակ, հռետո-
րական ոճով մը գտնելէ ետք թէ այդ շրջաբերականը «իբր բացարձակ
յեղափոխական ոգով նոր դարագլուխ է կազմում օսմանեան ազգի
համար,- կ'եզրակացնէ.- մենք կ'ընդունինք մեզ պարզած ձեռքը. նա
շաղախուած է անթիւ թշուառների աղի-արտասուքով, ներկուած մեր
եղբայրների, մեր քոյրերի, մեր գաղափարական ընկերների թանկա-
զին, սուրբ արիւնով. բայց մենք կ'ընդունինք։ Եւ բարոյապէս իրատունք
չունենք մերժելու, երբ ձեռքը այդ մեկնում է անկեղծօրէն, երբ մեկնո-
ղը խոստովանում է իր յանցանքները եւ ձգտում նրանց քաւելու»³¹։

Այդ շրջանին կ'արձանագրուին նաեւ ՀՅԴ-Երիտթուրք գործնական
յարաբերութեան առաջին փաստերը։ 1897 Մարտ-Ապրիլ ամիսներուն
Իթթիհատի էրզրումի մասնաճիւղէն ներս տեղի կ'ունենան ձերբակա-
լութիւններ եւ խուզարկութիւններ։ Կը ձերբակալուի նաեւ Սեդրակ
Փաստրմաճեան անունով հայ մը՝ Եւրոպայէն գումարներ ստանալու եւ
Իթթիհատին փոխանցելու ամբաստանութեամբ։ Խուզարկութիւննե-
րուն ընթացքին իշխանութիւններուն ձեռքը կ'անցնի սպիտակ թուղթ
մը, որ քիմիական լուծոյթով լուսալէ ետք կը պարզուի որ Ռուսիոյ վրա-
յով դրկուած է Փարիզէն եւ հրահանգ մըն է ՀՅԴ էրզրումի կոմիտէին՝
գործակցելու Իթթիհատի տեղւոյն մասնաճիւղին հետ, գտնելով որ հա-
կառակ շարք մը տարակարծութիւններու, երկու կազմակերպութիւն-
ները ունին ընդհանուր նպատակներ։³²

ԿՐԵՏԷ ԿՂԶԻԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Արդէն իսկ գոյութիւն ունեցող տարակարծութիւններուն կողքին,
հայ կուսակցութիւններուն եւ երիտթրքական շարժման մերձեցման
փորձերուն միջեւ յաւելեալ սեպ կը խրէ Կրետէ կղզիին շուրջ ծագած
տագնապը։

1897ի սկիզբը, Կրետէի յոյները կ'ապստամբին օսմանեան տիրապետութեան դէմ: Ապստամբութիւնը եւրոպական հանրային կարծիքին մօտ համակրութիւն կը գտնէ եւ յառաջ կը բերէ բազմազգեան կամաւորական շարժում մը: Յունաստան թիկունք կը կանգնի ապստամբներուն եւ կը պաշտպանէ Կրետէի միացումը Յունաստանին: Ապրիլին ծայր կ'առնէ թուրք-յունական պատերազմը: Մեծ տէրութիւնները կը պաշտպանեն Օսմանեան Կայսրութեան ամբողջականութեան սկզբունքը եւ ակնկալուած նեցուկը չեն տար յոյներուն: Վերջնական յաղթանակը կը տանին օսմանեան բանակները: Տագնապի օրերուն, երբ Ռըզա եւ Մուրատ պէյ կը համաձայնին մինչեւ պատերազմի աւարտը դադրեցնել ամէն ձեւի քարոզչութիւն որ կրնայ դժուարութիւն պատճառել Օսմանեան պետութեան, անդին, հայ կուսակցութիւնները բացայայտ եւ ամբողջական համակրութիւն կը յայտնեն յոյներուն: Գիւլեան կը վկայէ թէ յանձնառութիւններ տրուած էին արտասահման գտնուող արեւմտահայ փորձառու մարտական ուժերուն պատրաստ բլլալ մեկնելու Կրետէ⁴³: Կը նշուի թէ հնչակեան Փետայի Զարգանդի (Հըլլըղադ Յովհաննէսեան) գլխաւորութեամբ 70 հոգինոց կամաւորական խումբ մը յոյներու կողքին կը մասնակցի պատերազմին⁴⁴: Հնչակ եւ Դրօշակ թերթերը Կրետէի ապստամբութեան կ'անդրադառնան համակրական շարք մը յօդուածներով: Աւելին. երբ Միգանը կը քննադատէ Երոպայի հայ ուսանողներուն յունանպաստ մէկ հաղորդագրութիւնը, Դրօշակ իր «Պատասխան Միգանին» յօդուածին մէջ կը գրէ. «Ո՞ւմ համար է գաղտնիք, որ Յունաստանի անձնագոհ քայլին համակրանքով են վերաբերում ոչ միայն հայ, այլեւ օտար ուսանողները, ոչ միայն հայ ազգը, այլեւ նրա հետ՝ ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը: Ուրիշ տեսակ էլ չի կարող լինել, քանի որ բոլորն էլ համոզուած են, որ տաճիկ կառավարութեան պարտութեամբ միայն նրա հպատակ ժողովուրդները՝ թէ հայ եւ թէ մուսլիման հնարաւորութիւն կ'ունենան բռնակալութեան դարատր կապանքները խորտակելու: Նորութիւն է միայն 'Միգան'ի բռնած դիրքը, որով նա կարծես ուզում է լսել մեր բերնից 'այո'՝ խօսքը՝ մեզ 'հայրենիքի' դաւաճան անուանելու եւ մեր գլխին 'հայրենասիրական' յորդորներ կարդալու համար»⁴⁵:

Թուրք-յունական պատերազմը, երիտթրքական շարժման՝ ի մասնաւորի պատերազմի մը պարագային արտաքին միջամտութեամբ համիտեան վարչակարգը տապալելու կողմնակիցներուն վրայ ժխտական անդրադարձ կ'ունենայ այլ դիտանկիւնէ մը եւս: Վերջիններուս մօտ այդ ակնկալութիւնները յօդս կը ցնդին: Սուլթան Ապտիւլ Համիտ, լաւապէս օգտագործելով հոգեբանական առիթը, իր գործակալներուն միջոցով, կաշառքի ճամբով անոնցմէ շատեր կը հեռացնէ երիտթրքական շարժումէն: Դրօշակ անդրադառնալով այս երեւոյթին, իր «Խա՞ղ թէ Յեղափոխութիւն» առաջնորդող յօդուածով, սուլթանի ցանցին մէջ ին-

կող երիտթուրք գործիչները կ'անուանէ «ողորմելիներ», «անմիտներ», «դաւաճաններ», «նամերդներ» ու կ'աւելցնէ. «յունական պարտութիւնը մի գտիչ միջադէպ էր մաքրելու պատահական յեղափոխականներին: Երբ թուրքերի արժան յաղթութիւնները տերութեան քայքայման վտանգը ըստ երեւոյթին չքացրին, այդ արտաքին երեւոյթներով յափշտակուող 'յեղափոխականները' սկսան կակազել: Եւ հասաւ այնտեղ, որ հայերիս[] յոյներին նկատմամբ արտայայտած համակրութիւնը, մի տեսակ հակաժրագրային եւ 'ոճրագոյն' ցոյցեր նկատուեցան, իսկ ամենամեծ ձեռնածու Մուրատ պէյ համարձակեցաւ, ֆրանսերէն լեզուով մի ստոր գրութեամբ, ի միջի այլոց մեղադրել հայ տարրը, թէ նա իբր իր յարձակումները միշտ ուղղած է խաղաղ տաճիկ ժողովուրդի դէմ նզկիթների վրայ եւայլն: Այս մի ճարպիկ խաղ էր սուլթանին հաճոյանալու համար եւ Մուրատ պէյ հասաւ իր նպատակին: Սուլթանը նրան ներում է, նշանակելով հարէմի ներքինապետ»⁴⁶: *Տարբեր չէր նաեւ Հնչակի կարծիքը, որ իր «Անխուսափելի Գահալիթում» յողուածին մէջ կը գրէ. «Մեշերէքը, որ Ահմետ Ճալալտտին փաշայի առաքելութիւնը խրոխտանքով անյաջող է յայտարարում այսօր իրար հետ միասին ամբողջ աշխարհ գիտէ, որ իր ընկեր եւ 'Երիտասարդ Թուրքայի' ճանաչուած ընդհանուր պարագլուխ Մուրատ պէյ իրանց փաղիշակի գողումն է տաքանում: 'Մեշերէք'ը, որ խրոխտանքով սուլթանին խրատ է տալիս կառավարական զանձը չվատնել Ճալալտտինի առաքելութիւնների համար եւ 'կեղծատր սակարկութեան' մէջ չմտնել, քանի որ այդ 'անօգուտ է' այսօր յարգանքներ ու ներքողներ է շոայլում իրանց պարագլուխ այն Մուրատ պէյին, որ գործով ապացուցեց, թէ իր նմաններն ընդունակ են 'կեղծատր սակարկութեամբ' իրանց խիղճը, պատիւը, կուսակցութիւնը ծախելու 'անպատիւ սուլթանին', որը հեշտ բռնուող որսերի համար շատ ճարպիկ ու հմուտ որսորդ է»⁴⁷:*

1898 Ապրիլին Թիֆլիսի մէջ ընդ յատակեայ պայմաններու տակ կայացած ՀՅԴ Բ. Ընդհանուր Ժողովը, «Համերաշխութիւն օտար տարրերու եւ կազմակերպութիւններու հետ» օրակարգին տակ, կը քննարկէ նաեւ երիտթուրքական շարժման հետ մինչ այդ կատարուած յարաբերութիւնները ու կ'եզրակացնէ. «Երիտասարդ թուրքերու հետ շարունակել սկսուած համերաշխ գործունէութեան մասին քանակցութիւնները, անոնց թերթերու եւ մեր հրատարակութիւններու միջոցով պարզել տաճիկ կառավարութեան մեր ձգտումները եւ նպաստել անոնց մէջ իսկական յեղափոխական ոյժ ստեղծելուն»⁴⁸:

Կուսակցութեան գերագոյն ժողովին որոշումներուն թարգմանը ըլլալով, Դրօշակ աւելի յաճախ կը սկսի արձագանգել երիտթուրք-հայ գործակցութեան կոչերուն: 1898 Մայիսին, «Երիտասարդ Թուրքիան» յողուածով, ան կ'անդրադառնայ Օսմանլը թերթին մէջ լոյս տեսած

գործակցութեան հրաւերին ու կը գրէ թէ մինչ այդ իրենք հեռու մնացած էին նման գործակցութենէ, որովհետեւ «մենք շտեմանք թուրք յեղափոխականներ, մենք միայն տեսանք թուրք 'ազատամիտներ', 'խաղաղականներ'։ Իսկ դրանից մեզ մօտ էլ շատ կան։ Չգուեյ ենք անպտուղ յիշատակագիրներից, զգուեյ ենք Եւրոպայի առաջ խնդրելուց ու աղերսելուց, ողբալուց ու հառաչելուց, ազատութիւնը մուրացողից զարշում ենք մենք. դա էլ ցնորական է, էլ ստրկական ու անպատուարներ»։ Սակայն *Դրօշակ* կը տեսնէ թէ եկած են թարմ ուժեր որոնք պատրաստ են «զրկել կարմիր յեղափոխութեան դատը,- ուստի»- թող, որ թեորիայի մէջ մենք կարող ենք լինել տարբեր իրարից, բայց մենք ունինք մի ընդհանուր էլ մահացու թշնամի, որի դէմ կը մարտնչենք ընդհանուր ուժերով. դա Ապտիլիամիտի ռէժիմն է»⁴⁹։

Ամիս մը անց, *Դրօշակ* այս անգամ կ'ընդառաջէ *Մեշերէթէն* եկած գործակցութեան հրաւերի մը, միաժամանակ նշելով թէ. «այն 'Մեշերէթ'ը, որ մի քանի ամիսներ առաջ անդակտ կերպով յարձակում էր հայերի, պուլկարների վրայ։ Մենք չենք պատասխանում այդ անդակտ յարձակումներին, քանի որ համոզուած ենք, որ վաղը դրանք պիտի զոջան, որովհետեւ ճշմարտութիւնը մեր կողմն է։- Այս առթիւ թերթը կը մատնանշէ ա'յն վարչաձեւը, որուն շուրջ պարտին համախմբուիլ ընդդիմադիր բոլոր ուժերը.- այդ ֆետերադի (դաշնակցական) ռամկավար կառավարչական կազմակերպութիւնն է ապակեդրոնացման սխառնով»⁵⁰։

Նկատելի է որ *Օսմանլի* եւ *Մեշերէթի* կողմէ եղած գործակցութեան առաջարկները տպագրուած էին անոնց ֆրանսերէն յաւելուածներուն մէջ միայն եւ թրքերէն ընթացիկ թիւերուն մէջ տեղ չէին գտած։ Սա ենթադրել կու տայ որ երիտթուրք ղեկավարները հայերու հետ գործակցութեան իրենց առաջարկներուն մէջ զգոյշ էին թուրք մոլեռանդ ամբոխը իրենց դէմ գրգռելէ։ Նոյն ձեւով կը բացատրուի նաեւ այն երեւոյթը որ Իթթիհատ-ՀՅԴ բանակցութիւնները կը կատարուէին խիստ գաղտնի կերպով⁵¹։

Այդ շրջանին, երիտթուրք-հայ գործակցութեան որպէս օրինակ կը նշուի իւրատեսակ պարագայ մը եւս։ 1898 Ապրիլին, Օսմանեան կայսրութեան Լոնտոնի դեսպան Անդրոփուլոս փաշան սուլթանական պալատ յղած «Երիտթուրքերը եւ Հայ Խոռովարարները» վերնագրեալ ծածկագիր հեռագրին մէջ կը տեղեկագրէ թէ խումբ մը եւրոպացի անարխիստներ, երիտթուրքեր եւ Աւետիս Նազարբէկեան միասնաբար կը մշակեն սուլթանը ահաբեկելու ծրագիր մը։ Դեսպանը այս տեղեկութիւնները քաղած է ծրագրին մասնակից անարխիստ Ալեքսանտր Դեմիսկիէն, փոխան նիւթական վարձատրութեան։ Յամենայն դէպս, պատմագրութեան մէջ ցարդ չլուսարանուած այս ծրագիրը չ'իրականանար⁵²։

1899 Մայիսին, Ռուսիոյ նախաձեռնութեամբ Լահէյի մէջ կը գումարուի Խաղաղութեան Միջազգային Խորհրդաժողովը: Հայերը, մակեդոնացիներն ու երիտթուրքերը աշխատանք կը տանին մասնակցելու խորհրդաժողովին՝ իրենց հարցերը այնտեղ ներկայացնելու համար: Հայերու կողմէ պատուիրակ կը նշանակուի Մինաս Չերազ⁵³: Իթիֆհատի բոլոր մասնաճիւղերուն համաձայնութեամբ պատուիրակ կը նշանակուի Ռեզա, որուն կ'ընկերակցի իթիֆհատական Փիէր Անմեղեան: Ռեզա կը համոզէ Չերազը խորհրդաժողովին ներկայանալ միացեալ պատուիրակութեամբ: «Սա, առաջին անգամն էր, երբ հրապարակայնօրէն Իթիֆատը եւ հայերը կ'ունենային համատեղ գործունէութիւն»⁵⁴: Չերազին եւ Ռեզային չ'արտօնուիր ներկայանալ խորհրդաժողովին, այն առարկութեամբ որ անոնք պետական պատուիրակութիւններ չէին ներկայացներ: Վերջիններս սակայն խորհրդաժողովի մասնակիցներուն կը բաժնեն յուշագիրեր եւ կը կազմակերպեն դասախօսական երեկոններ:

Դրօշակ ամփոփելու համար 1899ի քաղաքական տարին, «Մեր Քաղաքական Համակիրները Թուրքիայում» խորագրին տակ, տեղ կու տայ «Մակեդոնիայի, երիտասարդ Թուրքիայի եւ քիւրտական գործիչներից մեզի ծանօթ անձանց» յօդուածներու: Այս ծիրէն ներս, «Երիտասարդ Թուրք Մը» ստորագրութիւնը օգտագործող յօդուածագիրը, կ'անդրադառնայ տարուան ընթացքին Հիլմիի կողմէ եղած օսմանեան բոլոր յեղափոխական ուժերը համաժողովի մը հրաւիրելու առաջարկին, կը նշէ թէ Մեշուրէթի յեղափոխական գործելաոճին կողքին կայ նաեւ Օսմանլի յեղափոխական տեսակէտը ու իր գրութիւնը կ'եզրակացնէ՝ «թէ՛ գոնկրտսին ջանքերը եւ թէ՛ երիտասարդ թուրքերու զանազան հրատարակութիւնները ակնբերեալ ապացոյց մըն են թէ երիտասարդ թուրքիան յեղափոխականներու միութեան ցանկացող է»⁵⁵:

Իրականութեան մէջ, Հիլմիի վերագրուած համաժողովի առաջարկը ներկայացուած էր Օգոստոսին, սակայն Ռեզայի կողմնակիցները մերժած էին այդ: Այս կապակցութեամբ, յատկանշական է Տքթ-Նազրմի նամակը Միւքութիին ուր կ'ըսուի. «ինչ կը վերաբերի Պրինստիգի մէջ կայանալիք առաջարկուած համաժողովին՝ երբ մէկը կ'ըսէ 'համաժողով', մեր միտքը կու գայ մարդոց խումբ մը որոնք կ'աշխատին միեւնոյն նպատակին համար: Ի շահ մեր կազմակերպութեան գումարուելիք համաժողովի մը համար քանի՞ հոգի կրնայ գտնուիլ: Մեր հայրենիքին ի՞նչ շահ կրնայ ապահովել համաժողով մը՝ որուն անկեղծօրէն կրնան ընդառաջել չորս ու կէս՝ արաբներ, հայեր, յոյներ եւ արլայնացիներ»⁵⁶:

Հայերու հետ համագործակցելու առաջարկով հանդէս կու գայ նաեւ Տամատ Մահմուտ փաշան, որուն «Բաց Նամակ Հայերուն» գրութիւնը կը տպուի Դրօշակի մէջ⁵⁷: Անդրադառնալով այս հրաւերին Դրօ-

չակ իր «Միութիւն թուրքերի Հետ» առաջնորդող յօդուածին մէջ կը գրէ. «Միանա՛նք՝ գեղեցիկ միտք. բայց ո՞ւմ հետ եւ ի՞նչպէս,՝ ու կ'աւելցնէ.՝ երիտասարդ թուրքերը, մեծից սկսած մինչեւ փոքրը, հայկական հարցի վերաբերմամբ միշտ ներշնչուած են միեւնոյն ոգով, այսինքն՝ հայկական հարցի համար, իբրեւ միջազգային խնդրի համար, ոչ մի արդարացուցիչ հանգամանք չտեսնելու հակումներով, հայերի կրած սարսափները նրանց թշուառ գլխին փաթաթելու պատրաստականութեամբ, հայկական կոտորածները անողոզակի ձեւերով արդարացնելու տրամադրութիւններով եւ վերջապէս մի այնպիսի պահանջկոտութեամբ դէպի մեզ, որ կարծես թուրք ժողովուրդն է մեծապէս վնասուել հայերից եւ վերջիններս են, որ դեռ մի բան պարտական են նրան:՝ Ապա, պաշտօնաթերթը ուշագրաւ դատողութեամբ մը կ'եզրակացնէ.՝ Տուէք մեզ որեւէ հաւաստիք, որ միանալով ձեզ հետ՝ դրանով մենք չենք ապահովի միայն ձեր հանգստութիւնը՝ թէ հայկական հարցը յաջողաբար խեղդեցիք եւ որ այդ հարցից այլեւս վտանգ չկայ օսմանեան գերիշխանութեան եւ նրա վաղեմի աշխարհակալ փառքին, այլ դրանով ձեռք կը բերենք թուրք ինդելիկեցիայի մի արժանահաւատ ոյժ, որ կարող է բարեփոխել մեր ժողովուրդի դրութիւնը,՝ եւ մենք յեղափոխականին վայել աւիւնով կը վազենք ձեր շարքերը անբացնելու: Բայց ե՞րբ կը լինի այդ...»⁵⁸:

1900 Յուլիս-Հոկտեմբեր ամիսներուն, Փարիզի մէջ տեղի կ'ունենան ոչ-պետական բնոյթի շարք մը միջազգային խորհրդածողովներ: Այդ ժողովներուն ներկայ կ'ըլլան նաեւ հայեր ու կ'արժարձեն հայկական հարցը: Համաժողովները կը քուէարկեն հայանպաստ բանաձեւեր⁵⁹: Խաղաղութեան խորհրդածողովին ելոյթ կ'ունենայ նաեւ Ռըզա, որ կը քննադատէ հայութեան ի նպաստ քուէարկուած բանաձեւը եւ կը փորձէ բացատրել թէ Օսմանեան կայսրութեան մէջ առանձինն՝ հայկական հարց՝ չկայ, այլ կայ կայսրութիւնը բարեկարգելու ընդհանուր հարց: Ժողովը Ռըզայի ելոյթը կ'ընդհատէ սուլոցներով: Ռըզայի ելոյթին կը հակադարձեն Փրոֆ. Մարիլիէ, Միքայէլ Յովհաննիսեան եւ Զօպանեան: Այս առիթով, Դրօշակ Ռըզան կը ներկայացնէ որպէս «արեւելեան այլասեռած կուլտուրայի մի գաւակ... որ տարիներով Փարիզում ընկած ուրիշ ոչինչ չգիտի, բայց եթէ հայերի հասցէին ուղղած ստոր գրպարտութիւններով՝ շահագործել մի շարք յարգելի մարդկանց հաւատը»⁶⁰, Ռըզա եւս չի բաւականանար միայն ելոյթով: Մեշէրէթի մէջ ան սանձարձակ յարձակումներ կը գործէ հայերու հասցէին: Անոր կը պատասխանէ Երուխան (Երուանդ Արմաթէշխանյեան), որ Վառնայի մէջ իր խմբագրած Շաւիղ հանդէսի Նոյեմբեր 15ի թիւին մէջ կը գրէ. «բոլոր Անժետ Ռըզաները, Խալիլ Ղանեմները, Մահմուտ փաշաները այս տեսակ արարածներ են. մերկացուր զիրենք իրենց ծպտումէն, ու պիտի տեսնես որ նախանձելի մրցակիցներ պիտի հանդիսանան Պոլսոյ փո-

դոցներուն երբեմնի արիւնկզակ շահատակներուն»: Շաւիղի մէկ այլ թիւին մէջ, Երուսան կը հաւաստէ որ երիտթուրքերու ծրագիրը «...նոյնքան կործանարար է հայութեան համար, որքան համիտեան դժոխային մեքենան, որուն մէջ տասը տարիէ ի վեր կոտորուելու վրայ ենք»⁶¹:

1900 Յուլիսին տեղի կ'ունենայ Սասնոյ Սպաղանք գիւղի ջարդը: Եւրոպական մամուլը այդ մասին աղմուկ կը բարձրացնէ: Մեշլերէթ կը սրտնեղի բարձրացած աղմուկէն ու հարց կու տայ թէ ինչո՞ւ Անգլիան եւ Ֆրանսան կրնան Ափրիկէի մէջ սպանութիւններ կատարել իսկ քիւրտն ու թուրքը իրենց երկիրներուն մէջ չեն կրնար իրենց հասկցած ձեւով դատաստան տեսնել հայ աւազակներուն հետ: Թերթը կը գրէ նաեւ թէ «Սպաղանքի դէպքը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ գերմանական կայսրը հրամայում էր Չինաստան գնացող իր զինուորներին ոչ մի գթութիւն ցոյց չտալ դէպի նրանց, որոնք կը դիմադրեն զենքով: Եթէ Վիլհելմի այս խօսքերը ուղղուած լինէին Ալի փաշային, նա իր հետոսական գործերի համար վարձատրութիւն կը ստանար»⁶²:

ԱՆՀԱՏ ՀԱՅԵՐ ԵՐԻՏԹՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԷՋ

Երիտթրքական շարժման տարբեր թեւերուն հետ հայ կուսակցութիւններուն ունեցած վերիվայր յարաբերութիւններէն անկախ, երիտթուրքերու հետ ուղղակի յարաբերութեան մէջ գտնուած են նաեւ անհատ հայեր: (Մինչեւ 1908, երիտթուրքերը յատուկ կապ մը ունեցած չեն պատրիարքարանին հետ, որ գտնուելով Պոլսոյ մէջ, բնականաբար յարաբերութեան մէջ պիտի չմտնէր հակապետական շարժման ղեկավարներուն, նոյնիսկ անդամներուն հետ, չվտանգելու համար իր պաշտօնական յարաբերութիւնը Բ. Դուան հետ:)

Այս շարքի հայերէն առաջինը կարելի է նկատել Լոնտոնի մէջ Պարսկաստանի դեսպան Մելքոն խանը: Դիւանագիտական աշխարհին մէջ հեղինակութիւն եւ լայն յարաբերութիւններ ունեցող Մելքոն խան, կը նկատուէր Պարսկաստանի սահմանադրութեան կերտիչներէն եւ Պարսկաստանի 'Միտհաթ փաշան': Ան էութեամբ սահմանադրական էր. կը հաւատար որ Օսմանեան կայսրութեան մէջ մասնակի բարեկարգումներու հարց չկայ, այլ կայ ընդհանրապէս կայսրութիւնը բարեկարգելու հարց՝ որ կ'իրագործուի սահմանադրութեան միջոցով: Այս սկզբունքով ալ ան գործնական գետնի վրայ սատար կը կանգնի Ռըզային ու տեսականօրէն ալ կ'աշխատակցի եւրոպական մամուլին՝ պաշտպանելով երիտթուրքերու տեսակէտերը:⁶³ Մելքոն խան նաեւ բարձրաստիճան ֆրանկմասոն էր եւ այս ուղղութեամբ եւս կապեր ունէր երիտթուրք պարագլուխներու հետ⁶⁴:

1896էն Ռըզայի 'սպայակոյտին' մէջ կը փայլի Փիէր Անմեղեանը, որ Օթթոման ծածկանունով կ'աշխատակցի Մեշլերէթին (որոշ շրջան մը

հայ կուսակցութիւններուն համար անյայտ կը մնայ որ Օթթոման գրչանունին ետին հայ մը թաքնուած էր): 1900ին ան Պրիւքսէլի մէջ կը հրատարակէ *Pour le Jubilé du Sultan* գրքոյկը: Նոյն տարին ան կը կաշառուի սուլթանէն, կը ստանայ պաշտօն ու կը վերադառնայ Պոլիս⁶⁵:

Փարիզի մէջ Իթթիհատին կը յարի Պետրոս Հալաճեան, որ սահմանադրութեան հռչակումէն ետք Իթթիհատի ցանկով կ'ընտրուի երեսփոխան⁶⁶ եւ աւելի ետք Հանրօգուտ Շինութեանց Նախարար կը նշանակուի:

Երիտթրքական շարժման Մուրատ պէյի թեւին կը յարի 1894էն արտասահման անցած Տիրան Քելէկեանը: Ան, 1897ին կ'ընդառաջէ սուլթանի գործակալներուն, կը վերադառնայ Պոլիս եւ կը նշանակուի Անձնական Գանձի Նախարարութեան քարտուղար, սակայն երիտթրքական շարժման հետ կը պահէ գաղտնի կապեր: 1904ին կը տեղափոխուի Գահիրէ, ուր երիտթրքական շարժման մէջ կը տանի աշխոյժ գործունէութիւն, իրեն գործակից ունենալով Պեհաէտտին Շաքիրը⁶⁷: Կը հրատարակէ նաեւ *Ենի Ճիքիթ* (նոր միտք) երիտթրքական երկչաքաթաթերթը⁶⁸:

Երիտթրքական շարժման կը յարի եւ Օսմանյլիին կ'աշխատակցի Տիգրան Զաւէն (Տիգրան Զուգասգեան)՝ երբ որպէս ուսանող կը գտնուէր ժընեւ: Աւելի ուշ, օսմանականութեան եւ սոցիալիզմի խառն գաղափարախօսութեամբ՝ Զաւէն 1906-1908 Թիֆլիսի մէջ կը հրատարակէ *Երկրի Զայն* շաքաթաթերթը, ուր կը ջատագովէ երիտթուրք-հայ գործակցութիւնը:

Գիւլեան կը վկայէ թէ Փարիզի մէջ քիչ չէր երիտթրքութեան յարած հայ ուսանողներու թիւը, որոնք «ուղղակի փորձանք էին դարձել մեր գլխին, ամէն տեղ մտնում, ելնում ու խօսում՝ որպէս հայրենասէր հայ»⁶⁹: Ասոնք եւս Ռըզայի հետեւողութեամբ սահմանադրականներ էին ու դէմ էին ամէն ձեւի անջատողականութեան եւ մասնակի բարեկարգումներու:

Օսմանեան Կայսրութեան սահմաններէն ներս եւս կային հայեր որոնք անդամակցեր էին Իթթիհատի ընդյատակեայ բջիջներուն: Երբ 1898ին իշխանութիւնները կը բացայայտեն Մերսինի եւ Ատանայի իթթիհատական գաղտնի կազմակերպութիւնները եւ ձերբակալութիւններ կը կատարեն, կը պարզուի որ անոնց շարքերուն մէջ կան նաեւ հայեր⁷⁰:

Հայերուն եւ ընդհանրապէս քրիստոնեաներուն մասնակցութիւնը երիտթրքական շարժումին, տեղի կու տայ տարբեր հակադարձութիւններու: Երեւոյթէն խանդավառ երիտթուրքերուն կողքին կ'ըլլան նաեւ դժգոհներ՝ առաւելաբար համիսլամական գաղափարախօսութեան ջատագովները: Երբ շարժման տարբեր թեւերուն միջեւ վէճերը կը սրին, Ռըզայի հակառակորդներէն Մայմուժի, քննադատելու համար Մեշէբրէթը կը գրէ թէ անոր շուրջ հաւաքուած են մերժուած եւ օտարացած տարրեր, որոնց շարքին՝ թերթը նիւթապէս հովանաւորող սուրիացի

Խալիլ Ղանէժը, «մեր պետութեան եւ կրօնքին թշնամի յոյն մը որ կ'օգտագործէ իմիտ (Արիստիտի) կեղծանունը, հայ մը (Փիէր Ամմեդեան) եւ հրեայ մը (Ալպեր Ֆուա): Մա կոչել կազմակերպութեան օրկանը՝ ստորութիւն եւ վատութիւն է»⁷¹: 1897ին, երբ Եգիպտոսի մէջ Իթիհաս կը փորձէ իր շարքերը ներգրաւել ընդդիմադիր կրօնականները, վերջիններս հրաւէրին ընդառաջելու համար նախապայման կը դնեն քրիստոնեաներու Իթիհասին անդամակցութեան դադրեցումը, բացատրելով որ. «յոյները յառաջ կը քաշեն Յունաստանի շահերը եւ պուկարները յառաջ կը քաշեն Պուկարիոյ շահերը: Հայերը կը հետապնդեն Հայաստան ստեղծելու ցնորքը եւայլն եւայլն: Այս ազգերու կրօնականներուն եւ ուսուցիչներուն կողմէ եկեղեցիներուն եւ դպրոցներուն մէջ մատուցուած քարոզներն ու դասերը, նոյնիսկ օրօրոցային երգերը որոնք դաստիարակչութիւններուն կողմէ կ'երգուին օրօրոցային մանուկներուն՝ իսլամին դէմ են: ...Քանի որ օսմանեան երկիրը իսլամական երկիր մըն է, ինչպէս որ կը ճանչնան մեծ պետութիւնները, ուստի անոր ներկայի կացութեան բարեկարգման հիմնական ուժը պէտք է պատկանի իսլամ տարրին»⁷²:

ԴէՊԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

1901 Մարտ-Ապրիլ ամիսներուն, իշխան Սապահէտտին եւ Լիւթֆուլլահ պէյ Հաք (իրաւունք) եւ Օսմանյը թերթերուն մէջ «Օսմանեան Հայրենակիցներուն» ուղղուած կոչերով, ընդդիմադիր բոլոր ուժերը կը հրաւիրեն խորհրդաժողովի⁷³: Կը կազմուի համադրող մարմին մը բաղկացած Սապահէտտինէն, Լիւթֆուլլահէն եւ Իսմայիլ Քեմալէն: Մարմինը ժողովի կը հրաւիրէ ընդդիմադիր շարք մը ծանօթ դէմքեր: Ժողովը, համադրող մարմին կը յանձնէ խորհրդաժողովին համար տարբեր կազմակերպութիւններու հրաւէրներ ուղարկելու պարտականութիւնը: Հրաւէրները կ'ուղարկուին Օսմանեան Ազատականներու Միութեան Ընկերակցութիւն (Սերպետ Օսմանյը Իթիհաս Ճեմիյէթի) անդոյ կազմակերպութեան անունով՝ տարբեր կազմակերպութիւններու միջեւ զգայնութիւններ յառաջ չբերելու նպատակով:

1901 Ապրիլին, ՀԹ Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմինը, Ֆիլիպէի մէջ (Պուկարիա) քննութեան կ'առնէ Տամատ Մահմուտ փաշայի խորհրդաժողովի հրաւէրը, կ'որոշէ մասնակցիլ խորհրդաժողովին եւ կը յանձնարարէ Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչ ընկերոջ խորհրդաժողովին մէջ պաշտպանել «Տաճկաստանի մէջ ինքնավար ազգութիւններու ֆետերաթիւ-պետական ձեւը»⁷⁴: Դրօշակ, որ մինչ այդ նման հրաւէրներու հանդէպ խստապահանջ էր, նշելէ ետք թէ այդօրինակ հրաւէրներ նաեւ ստացուած են իշխան Սապահէտտինէն, Լիւթֆուլլահ պէյէն եւ Հիլմիէն, փոխելով իր ոճը, «Գոնկրէս» յօդուածին մէջ կը գրէ. «Որքան եւ բազմաթիւ ու բազմակողմանի լինեն այդպիսի մէկ

համագումարի հետ կապուած խոչընդոտները, այդուամենայնիւ մեզ քում է, որ թուրք ազատամիտների յղացած գաղափարը ութուփիա չէ, եւ միանգամայն ցանկալի է նրա շուտամիտք իրագործումը, իբրեւ մի դրական քայլ դէպի այն բաղձալի համերաշխութիւնը, որին ձգտում են տարիներից ի վեր միեւնոյն բռնակալութեան, միեւնոյն դահիճի գոհերը: Շտապում ենք ծանուցանել, որ մեր պատասխանը դրական է եւ որ գումարուելիք համաժողովին ‘Դրօշակ’ը կ’ուղարկէ իր ներկայացուցիչին»⁷⁶:

Խորհրդաժողովին մասնակցութեան հրաւէր կը ստանայ նաեւ Հնչակեան Կուսակցութիւնը որ իր Գ. Համագումարին մէջ (Ղոնտոն, 1901 Հոկտեմբեր-1902 Մարտ) «աւելորդ» կը նկատէ մասնակցիլ անոր»⁷⁶:

Ժողովին մասնակցութեան կ’ընդառաջէ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը⁷⁷: ՀՅԴ եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնները կ’որոշեն ժողովին մասնակցիլ միացեալ պատուիրակութեամբ: Ժողովին մասնակցից հայ ներկայացուցիչներուն թիւին եւ անուններուն մասին պաշտօնական լրատուութիւն չ’ըլլար: Այդ պատճառով ալ, ժողովին մասնակցից հայ ներկայացուցիչներուն թիւին եւ անուններուն շուրջ գոյութիւն ունին հակասական տուեալներ⁷⁸: Բոլոր տուեալներուն մէջ ամէնէն վաւերականը կը գտնենք ժողովին մասնակցից Զօպանեանի կարծիքը, որ նշելէ ետք հայ մասնակցիցներուն անունները, կը վերլուծէ խորհրդաժողովին հանդէպ երիտթուրքերու նպատակադրումները եւ կը մեկնաբանէ իր կատարած դերը այդ ժողովին մէջ: Զօպանեան կը գրէ: «Քանի մը տարի առաջ, իշխան Սապահեւտտիւնի նախաձեռնութեամբ, նմանօրինակ համաժողով մը տեղի ունեցեր էր Փարիզ, որուն մասնակցեցայ՝ հանգուցեալ Շահրիմանին հետ՝ իբր ներկայացուցիչ Վեր. Հնչ. Կուսակցութեան, եւ որուն կը մասնակցէին նաեւ՝ դաշնակցութեան կողմէ բժիշկ Լորիս Մելիքեան եւ Սիսեան (Ալեւտիս) Ահարոնեան), ինչպէս եւ՝ անհատապէս հրաւիրուած՝ Մինաս Չերազ եւ Կ[արապետ] Պասմաճեան. այդ համաժողովին կը մասնակցէին նաեւ օսմանեան յոյներու եւ հրեաներու ներկայացուցիչներ: Ժէօնթուրքերուն նպատակն էր Թուրքիոյ այլազան ժողովուրդներու ազատագրական կազմակերպութեանց ներկայացուցիչներուն հաւանութիւնն ստանալ՝ կազմելու համար օսմանեան մեծ քոմիթէ մը որուն մէջ ձուլուէին գոյութիւն ունեցող ազգային գործօն կուսակցութիւնները եւ ամէնքը միասին ձեռք ձեռքի ներկայանային Եւրոպային իբր ազատասէր օսմանցիներ որ իրենց պետութեան բոլոր ցաւերուն դարմանը օսմանեան սահմանադրութեան վերահաստատումն կը յուսան: Դաշնակցականները կ’ուզէին ձեռով մը համաձայնութեան գալ, խզում յառաջ չբերել. Վեր. հնչակեանները կը մտածէին՝ ինձի հետ՝ թէ այդ ճամբուն մէջ մտնելը մեր ձեռքով թաղել էր մեր ազգային հարցը. ու ես կըրցածս ըրի որպէսի հայ պատգամատրները, ամէն համակրութիւն

ցոյց տալով հանդերձ ԺԵՕՆ-թուրքերու վերանորոգիչ ծրագիրներուն, խոստանալով հանդերձ կազմուելիք թուրք վերանորոգիչ մեծ քոմիթէին իրենց կուսակցութեանց աջակցութիւնը, չկապէին իրենց կուսակցութեանց ձեռքերը, խուսափէին որեւէ խոստումէ որ իրենց ազգային դատին ընդհանուր 'օսմանեան հայրենիքի' բարենորոգման մէջ հայուելուն, կորսուելուն պիտի առաջնորդէին: Հայ պատգամաւորները վերջ ի վերջոյ այդ եզրակացութեան վրայ համաձայնեցան, ու իրենց բարեմաղթութիւնները ներկայացնելով հեռացան համաժողովէն: Համաժողովը ցրուեցաւ առանց որեւէ արդիւնքի»⁷⁹:

Խորհրդաժողովի գաղափարին համաձայն կը գտնուի Իթթիհատի կեդրոնական Վարչութիւնը: Ռըզա, սկզբնապէս անտարբեր կը գտնուէի, սակայն ի վերջոյ կը համաձայնի մասնակցիլ: Խորհրդաժողովին, տարբեր պատճառներով հրաւէր չեն ստանար երիտթրքական շարժման այնպիսի ականաւոր դէմքեր, ինչպիսիք են Հիլմին (հակառակ որ ան եղած էր խորհրդաժողովի ջատագովներէն), Ի. Հաքքըն, Սիւքուլթին, Ա. Ծեւետէթը (վերջին երկուքը տակաւին կը պաշտօնավարէին Հոռոմի եւ Վիեննայի դեսպանատուներուն մէջ), Թեմօն, Իթթիհատի պաշտօնական նախագահ Էտհէմ Ռուհին (ասոր եւ Սապահէտտինի միջեւ կային անձնական հակակրօթիւններ) եւն.:

Խորհրդաժողովի կայացումը կը մտահոգէ սուլթանը: Ան կը կազմակերպէ արհեստական դատաւարութիւն մը եւ ի բացակայութեան մահուան կը դատապարտէ Տամատ Մահմուտ փաշան, Հոնա Քատրին եւ Խէյրէթ պէյը: Ապա, պաշտօնապէս կը դիմէ Փրանսական իշխանութիւններուն, բացատրելով որ նախատեսուած խորհրդաժողովը պիտի համախմբէ մահուան դատապարտուած վտանգաւոր անհրեկիչներ: Սկզբնական շրջանին Փրանսայի իշխանութիւնները կը տատամսին արտօնութիւն տալ խորհրդաժողովի կայացման: Համադրող մարմինը պահ մը կը մտածէ զայն կայացնել Լոնտոնի մէջ: Հոս եւս կը յառաջանան նման դժուարութիւններ: Թէ՛ Փարիզի եւ թէ՛ Լոնտոնի մէջ, խորհրդաժողովին գումարումը կը ստանայ տեղական հասարակական հնչեղութիւն, որուն ի նպաստ յայտարարութիւններ կ'ընեն եւրոպացի ընկերվարական եւ ազատախոհ մտաւորականներ ու քաղաքական գործիչներ: Վերջապէս Փրանսայի իշխանութիւնները կը թոյլատրեն խորհրդաժողովին Փարիզ կայացումը, այն պայմանով, որ ան ըլլայ դուրսփակ եւ առնուած որոշումներուն հրապարակումէն առաջ այդ մասին Փրանսայի իշխանութիւնները տեղեակ պահուին»⁸⁰:

Խորհրդաժողովին բացումը կը նախատեսուէր 1902 Յունուար 15ին: Սակայն, մասնակի ժողովներու եւ տարբեր կողմերու միջեւ տեսակէտերու մօտիկութիւն յառաջ բերելու միտումով կը յետաձգուի:

Խորհրդաժողովէն առաջ, Ռըզայի կողմնակիցները կը ներկայացնեն ծրագրի նախագիծ մը, ուր կ'ըսուէր.

«Օսմ. քաղաքական տան հանդեպ օրենքով սահմանուած կարգով ըլլալ հաւատարիմ, բոլոր քաղաքակրթութիւններուն եւ կրօնքներուն ապահովութեան կողքին ընդունիլ իսլամին գերակայութիւնը, իսլամ եւ ոչ-իսլամ հպատակներուն շնորհել նիւթական եւ հոգեւոր բարիքներէն օգտուելու հաւասարութիւն՝ ջանալով զանոնք միատրել քաղաքականօրէն, 1876ի սահմանադրութիւնը ընդունիլ հիմնարար սկզբունք երկրի ներքին եւ արտաքին քաղաքականութեան համար»⁸¹:

Ըստ երեւոյթին առաջարկուած նախագիծերուն շուրջ տեղի կ'ունենան քննարկումներ եւ յառաջ կու գան տարակարծութիւններ: Այս բանը կ'երեւայ Ռըզայի գրած անձնական մէկ նամակէն ուր կ'ըսէ. «Ես արմատականօրէն կը մերժեմ օտարներուն միջամտութիւնը մեր հայրենիքի ներքին գործերուն, ինչ անուան կամ վերնագիրի տակ որ ալ ըլլայ այդ: Օտար միջամտութեան առնչուող յօդուածը կը գտնուէր Իսմայիլ Բենալի եւ Մուսուրուս պէյի կողմէ պատրաստուած առաջին նախագիծին մէջ, որ հաւանութեան արժանացաւ անցեալ երեկոյ: Աւելի ուշ, իշխաններուն եւ հոճա Քատրիի առարկութիւններուն պատճառով այդ հանուեցաւ: Միայն չորրորդը մնաց: Ես հակառակած էի չորրորդ յօդուածին, ըսելով որ սահմանադրութիւնը կը ճանչնայ միջազգային համաձայնագրերը եւ այդքանը բաւարար է: Որպէս պատասխան, անոնք ըսին որ մեր հայ քաղաքացիները պիտի չմասնակցին, մինչեւ որ այս յօդուածը, յատկապէս Պերլինի խորհրդածողովին եզրակացութիւնները յիշատակուած ըլլան բնագրին մէջ: Քանի որ անոնց մասնակցութիւնը ցանկալի էր բոլորին համար, ես ընդունեցի այս յօդուածը»⁸²:

Հայկական պատուիրակութիւնն ալ կ'ունենայ ներքին, ինչպէս նաեւ համադրող մարմինն հետ հանդիպումներ: Պատուիրակութիւնը խորհրդաժողովին մասնակցելու իր վերջնական հաւանութիւնը կու տայ, երբ խորհրդաժողովի կազմակերպիչներուն պնդումներուն վրայ կը համոզուի թէ Պերլինի Դաշնագրին Յերդ յօդուածն ու Մայիսեան Բարեկարգումներու ծրագիրը իր յաւելուածով տեղ պիտի գտնեն եզրափակիչ յայտարարութեան մէջ⁸³: Հայկական պատուիրակութիւնը կ'որոշէ նաեւ խորհրդաժողովի տեւողութեան ցուցարբերել միասնական կեցուածք. բան մը որ տպաւորիչ ձեւով կը գործադրուի:

ՕՍՄԱՆԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐՈՒ Ա. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Փետրուար 4ին, 47 պատգամաւորներու մասնակցութեամբ տեղի կ'ունենայ պաշտօնական բացումը խորհրդաժողովին, որ երեք օրերու ընթացքին կը գումարէ վեց նիստ: Ժողովին նախագահ կ'ընտրուի իշխան Սապահէտտին, փոխնախագահներ՝ Կոստանդինոս Խատաս եւ Սիսեան էֆենտի, քարտուղար՝ Անասթաս Ատոսիտիս⁸⁴: Հայ պատուի-

րակներուն պահանջով Ֆրանսերէնը, թրքերէնի կողքին կ'ընդունուի որպէս ժողովի օգտագործման լեզու: Դարձեալ հայերուն փափաքով, Դրօշակի խմբագրութեան անունով ժողովի մասնակցութեան հրաւեր կը յղուի մակեդոնացի յեղափոխականներուն, որ սակայն չ'ընդառաջուիր:

Իշխան Սապահէտին կը կարդայ ժողովին յայտարարութիւնը եւ զայն կը դնէ քուէարկութեան:-

1. Մերժում ենք ամեն մի համերաշխութիւն օսմանեան ժողովորդների եւ այն ռեժիմի միջեւ, որի ներքեւ ապրում ենք քսանեւիհնգ տարիներից ի վեր. հարստահարութեան ռեժիմ, որ միակ աղբիւրն է կայսրութեան մէջ գործուող շարագործութեանց եւ որոնք բովանդակ մարդկութեան զայրոյթն են գրգռում:

2. Մենք ձգտում ենք կայսրութեան այլեւայլ ժողովուրդների եւ ցեղերի մէջ հաստատել մի համաձայնութիւն, որ առանց խտրութեան ամենքին պիտի ապահովի լիակատար վայելումն իրենց իրաւունքների, որոնք կայսերական հաթթերով եւ միջազգային դաշնագրով նուիրագործուած են եւ իրենց միջոց պիտի հայթայթի տեղական վարչութեան մասնակցելու իրենց օրինաւոր բաղձանքը ամբողջապէս գոհացնելու. նրանց պիտի դնի հաւասար աստիճանի վրայ՝ բոլոր քաղաքացիների իրաւունքի եւ պարտքի տեսակետով. նրանց պիտի ներշնչի հաւատարմութեան եւ անձնուիրութեան զգացումը դէպի օսմանեան գահը եւ տինաստին, որ միայն կարող է պահպանել նրանց միութիւնը:

3. Չանաղիւր պիտի լինենք ամեն առթիւ օսմանեան բոլոր ժողովուրդների իղձերը եւ բոլոր հայրենասէրների ճիգերը համախմբել դէպի այս երբեակ նպատակը՝ ա) Պահպանել օսմանեան պետութեան ամբողջութիւնն ու անլուծելիութիւնը. բ) Երկրի ներքին գործերի մէջ վերահաստատել կարգաւորութիւն եւ խաղաղութիւն, էական պայման յառաջդիմութեան. գ) Յարգել պետութեան հիմնական օրէնքները, մասնաւորապէս 1876ին հաստատուած սահմանադրութիւնը, որ նրանց անենականարեւոր մասն է եւ որ ամենից ապահով եւ ամենաքանկազին գրաւականն է ներկայացնում ընդհանուր բարենորոգումների, օսմանեան ժողովուրդների քաղաքական ազատութեանց եւ իրաւանց՝ ընդդէմ կամայականութեան:

4. Հոչակում ենք մեր հաստատուն որոշումը՝ յարգել միջազգային դաշնագրերը եւ մասնաւորապէս Պերլինի դաշնագիրը, որի տրամադրութիւնները, Թուրքիայի ներքին կարգաւորութեան

վերաբերեալ, պէտք է տարածուին պետութեան բոլոր նահանգների վրայ:

Եզրակացութիւն.

Սրանք լինելով այն սկզբունքները, որոնց վրայ հաստատուած է համաձայնութիւնը, կազմում ենք մի մշտական կոմիտէ, որ պիտի ջանայ այս սկզբունքներն իրականացնել եւ պիտի անի հարկատր դիմումները 1856թ. Փարիզի դաշնագիրը եւ 1878թ. Պերլինի դաշնագիրն ստորագրող պետութիւններին նրանց բարոյական աջակցութիւնը եւ նրանց կողմից բարիացական գործողութիւն ատաջ բերելու համար, իրեն նպատակ ունենալով գործադրել Տաճկաստանի ներքին կարգաւորութիւնը պայմանաւորող միջազգային յանձնառութիւնները ինչպէս եւ վերոյիշեալ դաշնագրերէն բխող բոլոր միջազգային որոշումնագրերը եւ նրանց պատշաճեցնել պետութեան բոլոր վիլայէթներին նրանցից իւրաքանչիւրին ամենաօգտակար եղանակով⁸⁵:

Յայտարարութեան ընթերցումէն անմիջապէս ետք, ժողովը կը բաժնուի երկու հակադիր հոսանքներու. Ռըզայի գլխաւորութեամբ օտար միջամտութեան դէմ արտայայտուողներ՝ «փոքրամասնականներ» կամ «հակամիջամտականներ» (ատեմի միւտահեյէճի) եւ իշխան Սապահէտտինի գլխաւորութեամբ «մեծամասնականներ» կամ «միջամտականներ» (միւտահեյէճի): Ռըզա կը մեկնաբանէ «փոքրամասնականներուն» տեսակէտը որ ընդհանրապէս ուղղուած կ'ըլլայ օտար միջամտութեան գաղափարին դէմ: «Մեծամասնականները» կ'առարկեն որ Եւրոպան միջամտութիւն պիտի կատարէ իրենց ցանկութենէն անկախ: Ուստի, նախընտրելի է որ այդ քայլը ըլլայ «բարենպատակ միջնորդութիւն» կամ «բարոյական գործողութիւն»: Երկար վէճերու տեղի կու տայ «բարենպատակ միջնորդութիւն» եւ «բարոյական գործողութիւն» եզրերուն սահմանումը:

Հայ պատուիրակները, որոնք կը զգան որ յայտարարութեան կապակցութեամբ իրենց տրուած խոստումները գործադրուած չեն, կը բողոքեն Պերլինի Դաշնագրին Յերդ յօդուածը բոլոր նահանգներուն վրայ տարածելու եւ 1876ի սահմանադրութիւնը իտէալականացնելու տեսակէտերուն դէմ եւ կը պահանջեն կարգալ հետեւեալ յայտարարութիւնը⁸⁶:-

1. Հայ կոմիտէները պատրաստ են օսմանցի ազատականների հետ գործակցիլ արդի ռեժիմը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկուած ամէն գործողութեան:

2- Ընդհանուր գործունէութիւնից դուրս, հայ կոմիտէները կը շարունակեն իրենց մասնատր անկախ գործունէութիւնը, քանի որ ինչպէս յայտնի է այդ գործողութիւնն ուղղուած է արդի

ռեժիմի դեմ եւ ո՛չ թէ Թուրքիայի միութեան եւ գործարանատրական (օրկանական) գոյութեան դեմ:

3- Իրենց սասնաւոր գործունէութիւնն ուրիշ նպատակ չունի արդէն, բայց եթէ անմիջական գործադրութիւնն յառաջ բերել Պերլինի դաշնագրի 61րդ յօդուածի, 1895թ. Մայիս 11 մեմորանտումի եւ նրա յաւելումի, ինչպէս եւ այն բարենորոգմանց ծրագրի, որ յանուն հայ կոմիտէների դիւանագիտական միջոցով ֆրանսական կառավարութեան յանձնուած յիշատակագրի մէջ յիշուած է⁸⁷:

Այս յայտարարութիւնը «մեծամասնականներուն» կողմէ հաւանութեան կ'արժանանայ: Անոնք կը խորհէին թէ Եւրոպայի միջամտութիւնը ապահովելու համար էական է հայերու մասնակցութիւնը երիտթրքական շարժման: Հայերուն խզումը, անոնց կարծիքով, Եւրոպայի մօտ դրական տպաւորութիւն չէր ձգեր: Ընդհանրապէս, խորհրդաժողովի տեւողութեան, իշխան Սապահէտտինի ճիգը կ'ըլլայ զայն հասցնել յաջող աւարտի: Այս նպատակով, ան ժողովէն ստեղծուելիք կեդրոնական վարչութեան տրամադրութեան տակ կը դնէ 25,000 Ֆրանս. Ֆրանք:

Հայ պատուիրակութեան ելոյթէն ետք, ներկաները հարց կու տան թէ ինչո՞ւ հայերը անտարբեր են կայսրութիւնը սահմանադրութեամբ օժտելու հարցին հանդէպ: Հայ պատուիրակները կը պատասխանեն թէ իրենք «սահմանադրական կառավարութիւն հաստատելու խնդրով դրականապէս զբաղելու ո՛չ պարտք եւ ո՛չ իրաւունք ունին, որովհետեւ իրենք ներկայացուցիչ են այնպիսի կազմակերպութիւնների, որոնք հայկական նահանգների համար եւրոպական դաշնագրերի որոշած բարեկարգումները իրագործելուց զատ ուրիշ նպատակ չեն ունեցել եւ չեն կարող ունենալ»⁸⁸: Այստեղ թուրք պատգամաւոր մը կ'ըսէ. «եթէ դուք չէք ուզեր սահմանադրութեան գործադրութիւնը եւ կիրառութիւնը, բարեկարգումն ու երջանկութիւնը օսմանեան երկրին, ապա մենք ձեզի ընդհանրապէս չենք ուզեր»⁸⁹:

Հայերու կատարած յայտարարութեան կապակցութեամբ իր ելոյթին մէջ Ռըզա կ'ըսէ թէ այսպիսի համաձայնութիւն մը կրնայ գոյանալ երկու անկախ պետութիւններու միջեւ եւ ոչ թէ նոյն երկրի տարբեր հատուածներուն մէջ ապրող համաքաղաքացիներուն միջեւ⁹⁰:

Յաջորդ նիստին (4րդ), հայերու դէմ բուռն ոճով ելոյթ կ'ունենայ նաեւ 'մեծամասնական' պատգամաւոր Իսմայիլ Քեմալ, որ կ'ըսէ. «Դուք իրաւունքներ ունիք որպէս օսմանցիներ: Դուք իրաւունք չունիք մեզի հետ սակարկութեան նստելու եւ առաջարկութիւններ ներկայացնելու որպէս պետութիւն»⁹¹:

Այս ելոյթէն յետոյ հայ պատգամաւորները մէկ առ մէկ կը հեռանան ժողովասրահէն:

Սապահէտտին կը մաղթէ որ հայերուն հեռացումը չձախողցնէ ժողովին ընթացքը, ապա անոնց հետ հաւանական համաձայնութեան մը կարելիութիւնը չբացառելու համար կը ներկայացնէ գաղջ բանաձեւ մը.-

1. Իրենց բնական նահանգներուն մէջ, ինչպէս նաեւ միւս բոլոր նահանգներուն մէջ, տեղական կառավարման մարմիններուն կազմակերպման հարցով իրագործել հայերու արդար ցանկութիւնները:

2. Ազատական գաղափարներու վրայ յենած կեդրոնական կառավարութեան հաստատումը, որ ըլլայ իրատեսքներու պահպանման եւ նահանգային վարչութիւններու կանոնաւոր աշխատանքին լաւագոյն երաշխիքը, որոնցմէ օգտուելու են հայերը կայսրութեան միւս բոլոր ժողովուրդներուն հետ հաւասար⁹²:

Ռըզա կ'ընդդիմանայ նաեւ այս առաջարկին ու կը գտնէ թէ հայերուն հետ իրական համաձայնութեան մը հասնիլը հնարաւոր չէ⁹³:

Վերջին նիստին, որուն հայ պատգամաւորները չեն մասնակցիր, իշխան Սապահէտտին կը կարգայ խորհրդաժողովին եզրափակիչ յայտարարութիւնը.-

Օսմանեան պետութեան ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք մասնակցեցին 1902թ. Փետր. 4-ին Փարիզում բացուած համաժողովին, վերոյիշեալ յայտարարութիւններին ծանօթանալուց յետոյ՝ բողոքում են Թուրքիայի արդի ռեժիմին դէմ:

Յանձնառու են միասին աշխատել՝

1. Կերպարանափոխել ներկայ կառավարական ռեժիմը, որը կ'ապահովուի սահմանադրութեան հաստատումովը:

Յիշեցնել եւրոպական պետութիւններին թէ իրենց պարտականութիւնը եւ մարդկութեան շահը պահանջում են իրենց եւ բարձրագոյն դրան միջեւ գոյութիւն ունեցող միջազգային պայմանագրերի եւ որոշումների պայմանները գործադրել տալ այնպիսի եղանակով, որ օսմանեան պետութեան բոլոր մասերը նրանցից օգտուեն⁹⁴:

Խորհրդաժողովը կ'ընտրէ կեդրոնական վարչութիւն մը կազմուած Տամատ Մահմուտ փաշայէ (պատուոյ նախագահ), իշխան Սապահէտտինէ, Իսմայիլ Քեմալէ, Ալի Հայտար Միթհատէ, Իսմայիլ Հաքքըէ, Հիւսէյն Սէյիտէ, Մուսուրուս Ղիկիսէ եւ Ճորճ Ֆարիտիսէ:

Խորհրդաժողովին մասնակիցները եւրոպական մամուլին կը յղեն ժողովին համառօտ ատենագրութիւնը, ուր կ'ըսուի թէ սահմանադրական վարչաձեւ ստեղծելու համար հայերը իրենց ջանքերը չեն միացնել օսմանեան ազատախոհներուն, որովհետեւ զայն կը գտնեն անժամանակ եւ իրենց շահերուն հակառակ⁹⁵: Եղածը զրպարտութիւն էր իրա-

կանութիւնը այն էր, որ համառօտ ատենագրութիւնը կը մշակուի առանց հայերուն, եւ վերոյիշեալ խօսքով հայերուն հեռացումը խորհրդաժողովէն՝ եւրոպական հանրային կարծիքին կը ներկայացուի ծուռ հայելիի մէջ:

Ժողովի փակումէն առաջ «փոքրամասնականները» կը յայտարարեն թէ ժողովի որոշումները զիրենք չեն բաւարարեր եւ իրենք պիտի գործեն սեփական ծրագրով, ժողովի որոշումներէն անկախ:

Հայ պատուիրակներու ժողովէն հեռացումէն ետք, «փոքրամասնականներուն» այս յայտարարութիւնը կու գայ հաստատելու խորհրդաժողովին ամբողջական ձախողութիւնը:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԷՆ ԵՏՔ

Խորհրդաժողովէն ետք, Փետրուար 14ին, տեղի կ'ունենայ սեղմ հանդիպում մը կարգ մը հայ պատուիրակներու եւ 'մեծամասնական' հոսանքի ներկայացուցիչներու միջեւ: Կը շօշափուին մօտաւորապէս նոյն նիւթերը: 'Մեծամասնականները' ամէն ձեւով կը փորձեն ապահովել հայերուն մասնակցութիւնը նորակազմ վարչութեան: Անոնք կ'առաջարկեն Գիլիսեան էֆենտին նշանակել վարչութեան անդամ: Վերջինս, որ մասնակցած չէր խորհրդաժողովին, կը մերժէ այդ պաշտօնը: 'Մեծամասնականները' հայերուն իրաւունք կու տան վարչութեան մէջ նշանակել իրենց թեկնածուն. բան մը որ երբեք չի գործադրուիր: Հայերը կը բողոքեն եզրափակիչ յայտարարութեան իրենց վերաբերող բաժնին մէջ եղած անճշտութեան դէմ: Այս կապակցութեամբ հայ պատուիրակները նամակով մը կը դիմեն խորհրդաժողովի նախագահին ու դարձեալ կը բացատրեն թէ իրենք դէմ չեն սահմանադրութեան վերահաստատման, սակայն իրենց հիմնական պահանջքն է որ իշխանութիւնները գործադրեն Պերլինի Դաշնագրով նախատեսուած հայաբնակ նահանգներու մասնակի բարեկարգումները, խոստանալով նաեւ «գործակցիլ արդի ուժիսը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկուած ամէն գործողութեան»: Այս նամակը կը տպագրուի եւրոպական մամուլին մէջ⁶⁰:

Խորհրդաժողովը երիտթրքական շարժման մէջ յառաջ կը բերէ խորունկ ճեղքուածք: Անկէ «յաղթական» դուրս եկած «մեծամասնականները», իրականութեան մէջ փոքրամասնութիւն էին: Երիտթրքական շարժման մէջ քիչ թէ շատ կշիռ ներկայացնող կազմակերպութիւնները՝ Փարիզ, Ժընեւ, Եզիպոս, Պուլկարիա «փոքրամասնութեան» կողմնակիցներ էին: Ասոնց ձեռքը կը գտնուէր Մեշեքէթ, Մեշեքէթ Յրանսերէն Յաւելուած, Ինթիքամ, Իսթիքրտաթ, Քիւրտխատան, Մուվազենէ, Մանճաք թերթերը: Անորոշ վիճակի մէջ կը մնար սակայն Իթթիհատի պաշտօնաթերթ Օսմանլիի ճակատագիրը:

Խորհրդածողովը փորձաքարի կը զարնէ հայ յեղափոխական կուսակցութիւններուն երիտթրքական շարժման հանդէպ ունեցած կեցուածքներուն հետեւողականութիւնը: Խորհրդածողովի գաղափարով խանդավառ տրամադրութիւն արտայայտած ՀՅԴն անկէ դուրս կու գայ յուսախար: «Լեռը մուկ ծնեց», «Գոնկրէսը վիժած կարելի է համարել» եւ նման որակումներով *Դրօշակ* իր «Յալիստենական Խարխափումներ» վերնագրով առաջնորդող յօդուածին մէջ կը գրէ թէ «Երոսպան հիասքափուած է»: Իսկութեան մէջ, այդ ՀՅԴի հիասթափութիւնն էր, որովհետեւ, պաշտօնաթերթին նոյն յօդուածը կ'եզրակացնէր. «Սկեպտիկ էինք երիտասարդ Թուրքիայի մտաւոր հասունութեան եւ քաղաքացիական առաքինութիւնների վերաբերմամբ. Փարիզի համաժողովը եկաւ, դժբախտաբար աւելի եւս ամրապնդելու մեր սկեպտոսիւնը»⁹⁷:

Հնչակի ոճը աւելի յաղթական է: Ան եւս կը գտնէ թէ «գոնկրէսը վիժեց». բայց, ինքնավստահ շեշտով մը կ'աւելցնէ թէ երիտթրքական շարժման հանդէպ այն եզրակացութեան որ յանգած էր Հնչակեան կուսակցութիւնը ու այդ պատճառով ալ մերժած իր մասնակցութիւնը բերել խորհրդածողովին, նոյն եզրակացութեան հասած էին անոր մասնակից հայ միւս կուսակցութիւնները: «Գոնկրէսը կազմակերպողները, նրանց ջոջերը, տաճկական խորամանկ տիպիւմադների այդ ապագայ խորամանկ գանտիտատները, գոնկրէսի հրաւիրեցին հայ յեղափոխականներին, որպէսզի, յանուն օսմանեան ընդհանուր ժողովրդների միութեան, յանուն ընդհանուր բարենորոգումների, խեղդիւն, ոչնչացնէին, ի սպառ անյետ անէին քաղաքական աշխարհից հայկական դատը: Այն՝ ինչ չկարողացաւ անել Համիտը իր հարիւր հազարաւոր զոհերով, նրանք ուզեցին, խաղաղ միջոցներով. լռիկ մնջիկ, գապիներային հաշիւներով յաջողցնել,- կը գրէ Հնչակ ու կ'աւելցնէ թէ հայ յեղափոխական կուսակցութիւններուն եւ երիտթրքական շարժման նպատակներուն միջեւ կայ մեծ վիճ մը որ ոչինչով կարելի է լեցնել. ուստի, պաշտօնաթերթը կ'առաջարկէ.- մենք թողնենք ուրեմն որ գնան այդ երիտասարդ թուրքերը իրենց բախտին, եթէ կարող են, ստեղծելու իրենց երազած երիտասարդ Թուրքիան: Մենք, հայ յեղափոխականներս, ոչինչ չունենք նրա դէմ: Բայց մենք էլ կը գնանք, մեր սեփական ուժերով, մեր սեփական միջոցներով եւ ապահով, երաշխաւորուած ու նպատակայարմար դաշնակցութիւններով, ստեղծելու մեր երիտասարդ Հայաստանը»⁹⁸:

Խորհրդածողովէն յետոյ, մեծ պետութիւններու արտաքին գործոց նախարարութիւններուն կը յղուին խորհրդածողովի մասին տեղեկագիրեր, որոնք առաւելաբար կը ներկայացնեն 'մեծամասնականներուն' տեսակէտերը: Այդ տեղեկագիրերուն վրայ կատարուած նշումներէն կարելի է եզրակացնել որ մեծ պետութիւնները յատուկ ուշադրութիւն

կը դարձնէին խորհրդաժողովին հայերու մասնակցութեան: Տեղեկագիրը կարդացող Քրանսացի դիւանագէտը կ'ընդգծէ անոր ճիշտ էջի այն տողերը որոնք կը վերաբերէին հայերու մասնակցութեան: Անգլիոյ վարչապետ Լորտ Սուզպրի էջատակին կը նշէ. «Հայ յեղափոխական կուսակցութիւններու ներկայացուցիչները համաձայնած են գործակցիլ երիտթուրքերուն հետ, բայց անջատ յայտարարութիւններ կատարած են»⁹⁰:

* * *

Երիտթրքական շարժման յարաբերութիւնը հայերուն հետ, անոր հիմնադրութենէն մինչեւ օսմանեան ընդդիմադիր ուժերու Ա. խորհրդաժողովը 1902ին, ընթացած է վերիվայրումներով: Երիտթրքական շարժումը միատարր եղած չէ. անոր տարբեր թեւերը ընդհանուր առմամբ ժխտական վերաբերմունք ունեցած են հայ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ: Այդուհանդերձ, անոնք համագործակցութիւն ցուցաբերած են հայերուն հանդէպ, սխալապէս զիրենք ազգային մտահոգութիւններէն հեռացնելու եւ համապետական հարցեր լուծելու, ինչպէս նաեւ հայ կուսակցութիւններուն ներուժը օգտագործելու համար: Այդ փորձերը արդիւնաւորուած են երբ 1902ին հայերու պատուիրակութիւն մը մասնակցած է ընդդիմադիր ուժերու Ա. խորհրդաժողովին: Անոնք խորհրդաժողովէն դուրս եկած են յուսախար, որովհետեւ երիտթուրքերը չեն գործադրած ցայդ իրենց տուած խոստումները:

Խորհրդաժողովի յաջորդող տարիներուն երիտթրքական շարժման մէջ տեղի կ'ունենան նոր պառակտումներ եւ վերախմբաւորումներ. սակայն, ընդհանուր առմամբ, շարժումը Օսմանեան կայսրութենէն ներս թէ դուրս կ'աճի ու կը ծաւալի: Այս միջոցին երիտթուրք-հայ հանդիպումները կ'ըլլան աւելի յաճախակի եւ գործակցութեան փորձերը աւելի շատ՝ մինչեւ օսմանեան ընդդիմադիր ուժերու Բ. խորհրդաժողովը՝ 1907 Դեկտեմբերին, որուն անմիջապէս կը յաջորդէ սահմանադրական յեղաշրջումը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Զոն Կիրակոսեան, *Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանի Առաջ, Ա. Հոր. «Հայաստան» Հրատ., Երեւան, 1982, էջ 125:*

² Այս բաժնին մէջ օգտագործուած պատմական տուեալները առաւելաբար քաղուած են Shukru Hanioglu, *The Young Turks in Opposition*, գիրքէն, Oxford University Press, N.Y., 1995:

³ Ernest Ramsaur, *The Young Turks Prelude to the Revolution of 1908*, Khayats publ., Beirut, 1965, էջ 20:

⁴ Hanioglu, *The Young Turks*, էջ 96:

- ⁵ Ստեփան Սալահ Գիւլեան, Պատասխանատուները, Տօնիկեան Հրատ., Պէյրուս, 1974, էջ 149.
- ⁶ Hanioglu, *The Young Turks*, էջ 114.
- ⁷ Նոյն, էջ 111.
- ⁸ Գուրգէն Եազընեան, Ապախի Համիտ Բ. Կարմիր Սուլթանը, Սեւան Հրատ., Պէյրուս, 1980, էջ 428.
- ⁹ Hanioglu, *The Young Turks*, էջ 118.
- ¹⁰ Նոյն, էջ 125.
- ¹¹ Նոյն, էջ 134.
- ¹² Նոյն, էջ 91.
- ¹³ Bernard Lewis, *The Emergence of Modern Turkey*, Oxford University Press Publ., London, 1968, էջ 212.
- ¹⁴ Սալահ Գիւլեան, էջ 140.
- ¹⁵ Նոյն, էջ 151.
- ¹⁶ Միքայէլ Վարանդեան, Վերածնող Հայրենիքը Եւ Մեր Դերը, ՀՅԴաշնակցութիւն Հրատ., Ժրնեւ, 1910, էջ 67-68.
- ¹⁷ Hanioglu, *The Young Turks*, էջ 36-37.
- ¹⁸ «Նամակ Պոլսից», Դրօշակ, 1895 Ապրիլ.
- ¹⁹ Սալահ Գիւլեան, էջ 152-154.
- ²⁰ Erdal Kaynar, *The Person Armenians Fear the Most: Ahmed Riza's Thoughts about the Ottoman Empire on the Eve of the 1908 Revolution*, էջ 2 (գիտական անտիպ գեկոյց).
- ²¹ Ramsaur, էջ 41.
- ²² Վարանդեան, էջ 363.
- ²³ Սալահ Գիւլեան, էջ 153.
- ²⁴ Նոյն, էջ 154.
- ²⁵ Հայկազն Ղազարեան, Տեղապան Թուրքը, Պէյրուս, 1968, էջ 352. նաեւ՝ Vahakn Dadrian, *The History of the Armenian Genocide*, Oxford, 1977, էջ 44.
- ²⁶ Hanioglu, *The Young Turks*, էջ 45.
- ²⁷ Նոյն, էջ 43. Hanioglu կը գտնէ թէ այս կողմ հայկական շրջանակներուն կողմէ դրական կ'ընդունուի, որուն որպէս փաստ կը վկայակոչէ Տիրան Քելէկեանի գրած յօդուածը *The Nineteenth Century* թերթին մէջ (նոյն էջ 241).
- ²⁸ Նոյն, էջ 80. նաեւ՝ Սալահ Գիւլեան, էջ 161.
- ²⁹ Արփիար Արփիարեան, «Մենք Եւ Երիտասարդ Թուրքերը», *Նոր Կեանք*, թիւ 21, 1900, էջ 323-326.
- ³⁰ Նոյն:
- ³¹ Սալահ Գիւլեան, էջ 155.
- ³² Արփիարեան, «Մենք Եւ Երիտասարդ Թուրքերը»:
- ³³ «Թուրքիոյ Շուրջը», Դրօշակ, 1 Հոկտեմբեր 1897.
- ³⁴ Ջոն Կիրակոսեան, Բուրժուական Դիւանագիտութիւնը Եւ Հայաստանը, «Հայաստան» Հրատ., Երեւան, 1980, էջ 427.
- ³⁵ Սալահ Գիւլեան, էջ 177.
- ³⁶ Նոյն, էջ 181.
- ³⁷ Դրօշակ, 5 Յունուար 1897.
- ³⁸ Hanioglu, *The Young Turks*, էջ 280.
- ³⁹ Հրաշ Տասնապետեան, *Նրիթեր ՀՅ Դաշնակցութեան Պատմութեան Համար*, ՀՅԴաշնակցութեան Հրատ., Պէյրուս, 1985, էջ 35.
- ⁴⁰ Նոյն, էջ 40.

⁴¹ *Դրօշակ*, 1897 Յունուար 20: Hanioglu որպէս սկզբնաղբիւր նշելով Միշէլ Յակոբեանի *Հարվրտ Համալսարանին մէջ պաշտպանած* “Hyphenated Nationalism: The Spirit of the Revolutionary Movement in Asia Minor and the Caucasus” աւարտաճառը, կ՞ըզէթէ «1897 Յունուար 20ին Դաշնակցութիւնը կը հրախրէ երիտրորքերը միանալ հայերուն եւ սուլթանը սպաննելով տապալել համիտեան բռնատիրութիւնը» (Hanioglu, *The Young Turks*, էջ 116 եւ 298): Հաւանարար խօսքը կը վերաբերի *Դրօշակի* վերոյիշեալ յօդուածին:

⁴² Hanioglu, *The Young Turks*, էջ 87:

⁴³ Սապահ Գիւլեան, էջ 192:

⁴⁴ Մ. Աւետիսեան, *Հայ Ազատագրական Ազգային Յիսնամեայ 1870-1920 Եւ Զօր. Անդրաբնիկ*, Փարիզ, 1954, էջ 89-90:

⁴⁵ *Դրօշակ*, 31 Մայիս 1897:

⁴⁶ *Դրօշակ*, 24 Յուլիս 1897:

⁴⁷ *Հնչակ*, Սեպտ. 1897:

⁴⁸ *Տասնապետեան*, էջ 61:

⁴⁹ *Դրօշակ*, 31 Մայիս 1898:

⁵⁰ «Առաջին Քայլ», *Դրօշակ*, 30 Յունիս 1898:

⁵¹ Hanioglu, *The Young Turks*, էջ 116:

⁵² Նոյն, էջ 130-132:

⁵³ Խորհրդաժողովին կապակցութեամբ հայկական բազմամարդ հաւաքներ տեղի կ'ունենան Պուլկարիա, Ռուսմանիա, Եգիպտոս եւ այլուր՝ որոնց մասնակիցները հաթուփեան պատուիրակ կ'առաջադրեն Մինաս Չերազը: Լոնտոնի մէջ, Հայ պատուիրակուիթիւն մը հանդիպում կ'ունենայ խորհրդաժողովին Անգլիան ներկայացնող պատուիրակութեան հետ, ինչպէս նաեւ Լոնտոնի մէջ ԱՄՆի դեսպանին կը յանձնէ ԱՄՆի նախագահ ՄքՔինլիին ուղղուած յուշագիրը մը: ԱՄՆի մէջ Հայ պատուիրակուիթիւն մը կը հանդիպի Լահէյ մեկնող ամերիկեան պատուիրակութեան անդամ Սէթ Լոյի հետ: Ետեւ եկած ազմուկը կը մտահոգէ սուլթանը, որ որպէս հակազդեցութիւն, օսմանեան պատուիրակութեան անդամ կը նշանակէ Տիրան Քելէկեանը ու կը ստիպէ Օրմանեան Պատրիարքին հեռազրեյ խորհրդաժողովի նախագահութեան, ըսելու համար որ թրքահայութիւնը խորհրդաժողովին պաշտօնական պատուիրակ չունի:

⁵⁴ Hanioglu, *The Young Turks*, էջ 129: Չերազի ազգային գործունէութեան նուիրուած հայերէն աշխատութիւններուն մէջ, այդպիսի համագործակցութեան մը մասին տեղեկութիւններ չգտանք (Արշակ Ալպոյաճեան, *Մինաս Չերազ Իր Կեանքը Եւ Գործը*, Գահիրէ, 1927. նաեւ՝ Մ. Չերազ, *Ազգային Խնդիրներ*, Փարիզ, 1927): *Դրօշակ* իր 1899 Մայիսի թիւին մէջ կ'անդրադառնայ խորհրդաժողովին «առանձին յայտագրով նաեւ 'երիտասարդ բուրքերի' մի խմբից ու 'ազատամիտ օսմանցիների' մի կոմիտէից» ներկայացուած յուշագիրներուն, սակայն միացեալ պատուիրակութեան մը մասին ակնարկ չ'ըներ: Իր Օգոստոսի թիւին մէջ եւս, *Դրօշակ* կը քննադատէ Ռեզայի կողմէ ներկայացուած յուշագիրը (ուր կ'ըսուի թէ երիտթուրքերը յեղատիտականներ չեն) ու դարձեալ նման գործակցութեան մը մասին ակնարկ չ'ըներ:

⁵⁵ *Դրօշակ*, Յունուար 1900:

⁵⁶ Hanioglu, *The Young Turks*, էջ 136:

⁵⁷ *Դրօշակ*, Սեպտեմբեր 1900:

⁵⁸ *Դրօշակ*, Հոկտեմբեր 1900:

⁵⁹ Այդ ժողովներու շարքին են միջազգային սոցիալիստական, սոցիալիստ մամուլի միջազգային, սոցիալիստ ուսանողներու, մարդկութեան եւ խաղաղութեան խորհրդաժողովները (*Դրօշակ*, 1900 Հոկտեմբեր, էջ 121-128):

⁶⁰ *Դրօշակ*, Հոկտեմբեր 1900:

- ⁶¹ Ժիրայր Դանիելյան, *Բանասիրական Որոշումներ*, Սիսիան Հրատ., Պէյրուս, 1996, էջ 245-246.
- ⁶² *Դրոշակ*, Հոկտեմբեր 1900:
- ⁶³ Սապահ Գիւլեան, էջ 155-158:
- ⁶⁴ Թովհաննէս Զաւրեան, «Պարսկաստանի Յեղափոխութիւնը Եւ Մելքոն Խան», *Վէժ, Գ. տարի*, թիւ 4, Սեպտեմբեր-Դեկտեմբեր 1935:
- ⁶⁵ *Դրոշակ*, Հոկտեմբեր 1900:
- ⁶⁶ Եղիկ Ճէրէճեան, «1912ի Օսմանեան Երեսփոխանական Ընտրութիւնները Եւ Արեւմտահայութիւնը», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. Իէ., 2007, էջ 103-160:
- ⁶⁷ Sh. Hanioglu, *Preparation for a Revolution*, Oxford University Press, 2001, էջ 131, 133-136, 168, 184:
- ⁶⁸ Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Բ. Հտր., Կեսարիոյ Եւ Երջակայից Հայրենակցական Միութեան Հրատ., Գահիրէ, 1937, էջ 2072*:
- ⁶⁹ Սապահ Գիւլեան, էջ 150:
- ⁷⁰ Hanioglu, *The Young Turks*, էջ 120:
- ⁷¹ Նոյն էջ 96-97:
- ⁷² Նոյն էջ 102-103:
- ⁷³ Hanioglu, *The Young Turks*, էջ 166 եւ 335:
- ⁷⁴ Տասնապետեան, էջ 364:
- ⁷⁵ *Դրոշակ*, Ապրիլ 1901:
- ⁷⁶ Սապահ Գիւլեան, էջ 197:
- ⁷⁷ Մանօթ է որ Հնչակեան Կուսակցութիւնը 1896ի իր Ա. Համադումարին կը պառակտի երկու հատուածներու՝ «Հին Հնչակեան» (որ աւելի ուշ կ'անուանուի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն) եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւն: Երկու հատուածներու վերամիաւորման փորձերը կ'ըլլան ապարդիւն. անոնք կը գործեն որպէս առանձին կուսակցութիւններ: Անահիտ Տէր Մինասեան, առանց արտարբերութիւնը նշելու, իր «The Role of the Armenian Community in the Foundation and Development of the Socialist Movement in the Ottoman Empire and Turkey, 1876-1923» ուսումնասիրութեան մէջ, կը գրէ թէ Հնչակեան Կուսակցութիւնը մասնակցեցաւ խորհրդաժողովին (M. Tuncay, E. Zurcher (eds.), *Socialism and Nationalism in the Ottoman Empire, 1876-1923*, London, 1994, էջ 137): Նոյն սխալին կը հանդիպինք Տասնապետեանի մօտ՝ *Պատմութիւն Հայ Յեղափոխական Եարժման Եւ ՀՅԴաշակցութեան*, Համազգային Հրատ., Պէյրուս, 2009, էջ 244:
- ⁷⁸ Հանիօղլու, կը վկայակոչէ Միւնիխ պէյի Տելքասիին յղած նամակը, ուր տրուած են ժողովին մասնակից 47 անձերու անուններ, որոնց մէջ երեք հայեր՝ Կ. Պատմանեան, Ա. Զօպանեան եւ Մրսեան էֆենտի (Hanioglu, *The Young Turks*, էջ 348): Արսէն Աւագեանի համաձայն, խորհրդաժողովին կը մասնակցին 60-70 պատգամաւորներ եւ ժողովին փոխնախագահը կ'ըլլայ Ահարոնեանը (Ermeniler ve Ittihat ve Terakki-Ishtirakindan Catesmaya (Հայեր եւ Իթթիհատ Վէ Թերաքքը. զործակցութենէ ճակատում), Aras Publ., Istanbul, 2005, էջ 18): Արսէն Կիսուրի համաձայն, հայերու կողմէ կը մասնակցին Աւետիս Ահարոնեան, Մինաս Զերազ եւ Կ. Պատմանեան (*Պատմութիւն ՄՀՀնչակեան Կուսակցութեան*, Հտր. 1, Պէյրուս, Եիրակ, 1962, էջ 312):
- ⁷⁹ Ա. Զօպանեան, «Կիլիկեան Երազը Եւ Ալեքսան Արզուեան», *Անահիտ*, նոր շրջան, թիւ 3-4, 1935:
- ⁸⁰ Hanioglu, *The Young Turks*, էջ 175-177:
- ⁸¹ Նոյն, էջ 18:
- ⁸² Նոյն, էջ 186:
- ⁸³ «Օսմանցի Ազատականների Համաժողովը», *Դրոշակ*, Փետրուար 1902:

⁸⁴ Hanioglu, *The Young Turks*, էջ 189.

⁸⁵ *Դրօշակ, Փետրուար* 1902. նաև՝ Hanioglu, *The Young Turks*, էջ 186-187.

⁸⁶ Հայ ներկայացուցիչներուն համար 1876ի սահմանադրութեան վերահաստատումը բաւարարութիւն չէր տար հայոց պահանջներուն: Անոնք կը պնդէին թէ հայկական նահանգներուն կազութիւնը այնպիսին է, որ հոն անհրաժեշտաբար պէտք է տեղի ունենան անմիջական բարեկարգումներ՝ ըստ Պերլինի Դաշնագրի Յերդ յօդուածին, որուն, առնին, իր համաձայնութիւնը տուած էր Օսմանեան կայսրութիւնը: Ուստի, հայ ներկայացուցիչները այս պահանջքը կը դնէին իրրեւ նախապարձան՝ երիտթրքական շարժման հետ որեւէ գործակցութեան համար:

⁸⁷ *Դրօշակ, Փետրուար* 1902:

⁸⁸ Նոյն:

⁸⁹ Hanioglu, *The Young Turks*, էջ 350.

⁹⁰ Hanioglu, *The Young Turks*, էջ 194.

⁹¹ Նոյն, էջ 195:

⁹² Նոյն:

⁹³ Նոյն:

⁹⁴ *Դրօշակ, Փետրուար* 1902:

⁹⁵ Նոյն:

⁹⁶ Նոյն:

⁹⁷ *Դրօշակ, Մարտ* 1902:

⁹⁸ Հ. Խ. (Մապաճ Գիւլեան), «Երիտասարդ Թուրքիա եւ Երիտասարդ Հայաստան Անդակոնիզմը», *Հնչակ*, 1 Մայիս 1902:

⁹⁹ Hanioglu, *Preparation for a Revolution*, Oxford, 2001, էջ 12, 322.

YOUNG TURKS AND ARMENIAN RELATIONS AND
THE FIRST CONVENTION OF OTTOMAN OPPOSITION FORCES
(Summary)

YEGHIG DJEREDJIAN
yeghjerj@dm.net.lb

In the mid-19th century political opposition against Sultan Abdul Hamid's regime in the Ottoman Empire, known as the Young Turks Movement, took shape.

This opposition was characterized mostly as an exile movement and was not uniform. For both strategic and maneuvering reasons, the movement was divided into different groups.

The birth and development of the Young Turks movement coincided with the growth of the Armenian national liberation movement. The latter led to the formation of organized Armenian political parties, the Social Democrat Henschagian Party, the Armenian Revolutionary Federation and the Reformed/restructured Henschagian Party.

The Young Turks movement leadership had a negative attitude towards the Armenian national liberation movement, accusing it of being the creation of foreign countries which used the movement to press for their own state interests.

Nevertheless, the Young Turks made efforts to cooperate with the Armenian parties and tried to persuade the latter to address pan-state concerns, like the toppling of Abdul Hamid's regime, restoration of the Midhat constitution, implementing general reform, etc. It was intended to make use of the Armenian parties' capacities for pan-state plans.

The Armenian parties were not against general reform in the Ottoman Empire. However, they noted that the Armenians' condition in the Empire needed immediate addressing and reform. Accordingly, they emphasized Article 61 of the Berlin Conference and the implementation of the plan proclaimed on May 11, 1895.

Diverse groups of the Young Turks Movement met with different Armenian parties to cooperate. These meetings eventually led to the convening of the first convention of Ottoman opposition forces. It involved different groups of the Young Turks and the diverse national liberation movements of the Ottoman Empire. Certain Armenian groupings participated in the Convention, which failed, and the Armenian participants left it disappointed.